


ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒԹՅՈՒՆ




Մ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ԲԱՐԻՍՈՒԹԱՐՅԱՆ



ՍԱՐԳԻՍ ԲԱՐԵՒՈՒԴԱՐՅԱՆ

A 9278



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1968

78 Ap
p 35

Գրքովկը նախապատրաստված է
Հայկական ՍՍՀ ԳԱ Արվեստի
ինստիտուտի կողմից:

Маргарита Погосовна Тер-Симонян

Саркис Бархударян

(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван — 1968



Մարգիս Բարխուղարյանի ստեղծագործությունը կարևոր է խաղացել Հայ պրոֆեսիոնալ երաժշտության, մասնավորապես կամերային-գործիքային ժանրերի զարգացման գործում: Նա Հայ երաժշտության մեջ մուտք գործեց գեռաս նախահեղափոխական շրջանում, երբ նոր-նոր էր ձեռագործում կոմպոզիտորական պրոֆեսիոնալ ստեղծագործությունը: Մեր երաժշտության համար դա կարևոր ու նշանակալից փուլ էր. Հայկական ժողովրդական երաժշտությունը հավաքելու, ձայնագրելու, մշակելու, ներդաշնակելու ասպարեզում վիթխարի գործ կատարած կոմպոզիտորներին փոխարինելու եկան երաժիշտներ, որոնք, հիմնվելով աղքային ֆոլկլորի ավանդույթների վրա, կոմպոզիտորական ինքնուրույն ստեղծագործության հիմքերը դրեցին: Նրանց շարքում իր ակնառու տեղն ունի Բարխուղարյանը: Հայկական դաշնամուրային երաժշտության զարգացումը գլխավորապես նրա անվան հետ է կապված: Դաշնամուրի աղքային գրականության մեջ նա նոր, հետաքրքիր էջ բաց արեց, ստեղծելով քնարական ու ժանրային մանրանվագների գեղեցիկ

նմուշներ, լի գրավչությամբ ու բանաստեղծական հմայքով,
նրբաճաշակ ու թարմ պատկերներով:

Սնվելով ժողովրդական երգալին-պարային սկզբնաղբյուր-
ներից, կամերային մանրանվագի ժանրում նա շարունակեց
Կոմիտասի և Ն. Տիգրանյանի գործը: Միաժամանակ, հայկա-
կան պրոֆեսիոնալ երաժշտության ինտոնացիոն ոլորտը
Բարխուղարյանը նկատելիորեն հարստացրեց ինքնատիպ,
անհատական մեղեդայնությամբ, ոփթմա-շափական և հար-
մոնիկ դարձվածքներով, դաշնամուրային երաժշտության
ժանրային ընդգրկումներն ընդլայնեց երաժշտական կենցա-
ղային փոքրիկ պատկերներով, ճեպանվագներով և, արդեն
գոյություն ունեցող ավանդույթներին համապատասխան,
հարստացրեց դաշնամուրային հինվածքը: Նա պարային ինք-
նատիպ երաժշտության հիմնադիրը դարձավ: Նրբորեն զգա-
լով պարային ժանրերի արտահայտչական հնարավորություն-
ները, ոիթմի բազմազան երանգները, շարժման պլաստիկան,
նա ստեղծեց պարային հիանալի պիեսներ: Պարայնությու-
նը բնորոշ է նրա շատ այլ գործերին ևս: Բարխուղարյանը՝
նրբակերտ ձեփ վարպետը, ջրաներկ վրձնի նկարիչը, իր ողջ
ոգեշնչումը ներդրեց կամերային մանրանվագի մեջ: Խոշոր
ձեզ նրան այնքան էլ չէր հրապուրում, այնքան էլ չէր հաջող-
վում: Նույնիսկ իր առավել հաջողված խոշոր ստեղծագործու-
թյան՝ «Նարինե» բալետում նա թեև չկարողացավ ձեփ ամ-
րողական ընդգրկման հասնել, բայց և այնպիս կերտեց
պարային վառ, արտահայտիչ համարների մի ամբողջ
շղթա:

Նրա ստեղծագործության մի հիանալի էջն է մանուկների

Համար գրված երաժշտությունը: Կոմպոզիտորն արժեքավոր ավանդ ունի նաև ժողովրդական ու գուսանական երգերի մըշակման ասպարեզում: Ժողովրդական երգերի, ինչպես և Սայաթ-Նովայի երգերի մշակումների նրա ժողովածուները լավ ճաշակի, ազգային երգարվեստի յուրահատկությունների խոր ըմբռնման կնիքն են կրում:

Որպես սկզբունքքային ու համոզված արվեստագետ, Բարխուտարյանը գտավ իր հատուկ ազգային-ինքնօրինակ ոճը, մատչելի մեղեդային հարստությամբ օժտված երաժշտական լեզուն և ստեղծագործական ողջ գործունեության ընթացքում զարգացրեց ու խորացրեց իր անհատականության բնորոշ գծերը:

Բարխուտարյանի ստեղծագործությունը հայկական պրոֆեսիոնալ երաժշտության արժեքավոր ու ինքնատիպ մասնէ կազմում:

Սարգիս Բարխուտարյանը ծնվել է 1887 թ. օգոստոսի 26-ին Թիֆլիսում, 2-րդ կարգի ունկոր վաճառական վ. Մ. Բարխուտարյանի ընտանիքում: Վաղ հասակում նա կորցրեց հորը (1894 թ.): Երեխաների դաստիարակության ողջ ծանրությունն ընկալ մոր՝ տիկին Վարդուհու ուսերին: Բարխուտարյան ընտանիքը բազմանդամ էր՝ հինգ տղա և երեք աղջիկ: 27 տարեկանում այրիանալով, տիկ. Վարդուհին երկրորդ անգամ շամուսնացավ, այլ ամբողջովին նվիրվեց ընտանիքին, երեխաներին: Խելամիտ, եռանդուն, նպատակասլաց կին էր նա, սիրում էր զրբեր, թատրոն ու արվեստ: Նա կարողացավ երեխաների համար կիրթ ու քաղաքավարի կենցաղ, նրանց ընդունակությունների զար-

գացմանը նպաստող պայմաններ ստեղծել: Երաժշտության
նկատմամբ տածած սերը Սարգիս Բարխուդարյանը ծնողնե-
րից է ժառանգել: Թեև պրոֆեսիոնալ երաժիշտներ չէին նը-
րանք, բայց երաժշտությունը մշտական հյուր էր նրանց տա-
նը: Հոր ավագ եղբայրը՝ Ալեքսանդրը, Թիֆլիսի հայտնի թառ
նվագողներից էր: Նրա փոքր քույրը՝ Նինան, լսողությամբ
հարմոնիկա, մի քիչ էլ դաշնամուր էր նվագում: Մայրը՝
Վարդուհին, բավական լավ երգում էր: Բացի այդ, հենց հին
Թիֆլիսի կենցաղը երաժշտության հանդեպ ակամայից սեր
ու ձգտում էր առաջացնում: Տունը, ուր ծնվել ու մեծացել է
Սարգիս Բարխուդարյանը (ուր մինչև այժմ էլ ապրում է),
զանովում է Թիֆլիսի առավել գեղադիր և բնորոշ թաղամա-
սում: Հնում այդտեղ էր շուկայի հրապարակը իր պեսպիսի
և շափազանց բազմաբնույթ ամբոխով: Վաղ առավոտից այս-
տեղ չէր դադարում աղմուկն ու իրարանցումը: Արևելյան
շուկաներն իրենց անկրկնելի, ուրույն կերպարանքն ունեն,
իրենց գունեղ և անշափի հրապարիչ գեմքը: Թիֆլիսյան շու-
կաներում նույնպես, ինչպես և այլուր, մշտական գործող
անձինք էին ժողովրդական երաժիշտները, մեծ մասամբ՝
կույր երաժիշտներ, թառ, քյամանշա, զուղուկ նվագողներ: Հաճախ
դրանք արտակարգ օժտված, ժողովրդական ավան-
դույթները պահպանող, բանահյուսություն ստեղծող մար-
դիկ էին: Սովորաբար նրանց շուրջ ժողովուրդ էր հավաք-
վում, երկար կանգնում ու լսում սիրված երգերն ու պա-
րեղանակները: Սարգիս Բարխուդարյանը փոքրուց լսում էր
ժողովրդական երգեր, ու նրա լսողությունը ճիշտ ուղղու-
թյամբ էր զարգանում: Մանկության տարիներին սկսեց շվի

նվագել, փորձելով վերաբռտադրել լսածը: Շուտով Բարիսուդարյանների տանը երաժշտական գործիքներ հայտնվեցին՝ մայրը տղայի համար մի մեծ քնար գնեց, ապա՝ ֆոնոգրաֆ, գրամոֆոն: Վերջապես դաշնամուր ձեռք բերեցին: Անշուշտ, այս փաստը բախտորոշ նշանակություն ունեցավ Սարգիս Բարիսուդարյանի համար: Անմիջապես սկսեց երաժշտության դասեր առնել, սկզբում մասնավոր (Սոֆիա Կարախանյանի մոտ), իսկ 1900 թ. ընդունվեց երաժշտական ուսումնարան՝ Յադվիգա Կարպովնա Ստախովսկայայի դասարանը:

Նրա եղբայրներն ու քույրերը նույնպես զբաղվում էին երաժշտությամբ. ավագ եղբայրը՝ Միքայելը, սրինգ էր նըգագում, նիկիտան և Ալեքսանդրը՝ չութակ (նրանք նաև երգում էին Մողնու եկեղեցու երգչախմբում), Մարգարիտը՝ ավագ քույրը, ավարտեց Թիֆլիսի կոնսերվատորիայի երգեցողության (վոկալ) դասարանը, իսկ փոքր եղբայրը՝ Գրիգորը, դարձավ Թիֆլիսի օպերայի և բալետի թատրոնի դերասան, հետագայում՝ ոեժիսյոր: Եռանդուն մայրը շբավարպեց երեխաններին սոսկ երաժշտական կրթություն տալով: Տանը նա իր և բարեկամների 12 երեխաններից բաղկացած երգչախումբ ստեղծեց: Երգչախմբին նվագակցում էր Սարգիսը: Հիմնականում նրանք երգում էին Կարա-Մուրգայի մըշակած հայկական երգերը: Մեկ-մեկ էլ սիրողական ներկայացումներ էին կազմակերպում: Տանը տիրող նման իրավիճակը ամենաբարենպաստ ազդեցությունն ունեցավ երեխանների գեղարվեստական ճաշակի վրա:

Բարիսուդարյանի ուսումնառությունը երաժշտական ու-

սումնարանում բավականին հաջող էր ընթանում: Երկու և
կես տարի անց նա փոխադրվեց Հայտնի դաշնակահար-ման-
կավարժ Լուցիան Լուցիանովիլ Տրուսկովսկու դասարանը:
Այստեղ նա տեսական հիմնավոր գիտելիքներ ստացավ,
պարագելով այնպիսի երաժիշտների զեկավարությամբ, ինչ-
պիսիք էին Զ. Փալիաշվիլին (տեսություն և սոլֆեզիո) և
Ն. Նիկոլաևը (հարմոնիա):

Բարխուդարյանի երաժշտական ընդունակություններն
ակնհայտ էին: Անհրաժեշտ էր մտածել դրանց ձիշտ զար-
գացման, ստեղծագործական ձգտումներին պատշաճ ուղղու-
թյուն տալու մասին: Հավանաբար, հենց այդ մտահոգու-
թյունն ստիպեց տիկ. Վարդուհուն 1900 թ. հայոց լեզվի դասա-
տուի հետ Հայաստան ուղարկել որդուն: Անշուշտ, այդ ուղե-
վորությունը մեծ օգուտ տվեց: Պատանին եղավ իր հայրե-
նիքի պատմական վայրերում՝ Ալեքսանդրապոլում, Անիում,
Էջմիածնում: Այստեղ նա հանդիպեց Կոմիտասին: Հետա-
գայում, Թիֆլիսում նա լսեց Կոմիտասի զեկավարած երգչա-
խումբը: Երիտասարդ երաժշտի նույրը, զգայուն լսողությու-
նը որսաց և խորապես յուրացրեց ազգային հարազար-
ինտոնացիան, Հայկական մելոսի յուրահատկությունը: Սա-
կայն այդ ամենին դեռ պակասում էր պրոֆեսիոնալ անհրա-
ժեշտ հիմքը:

1907 թ. Ս. Բարխուդարյանը մեկնում է Բելլին: (Այստեղ
բժշկություն էր ուսանել նաև նրա ավագ եղբայրը՝ Միքայե-
լը): Շարլոտենբուրգում նա մասնավոր դասեր է առնում
Արքունական կոնսերվատորիայի պրոֆեսոր ի. Շուցից: Դժվա-
րին մրցույթից հետո նա ընդունվում է Արքունական կոնսեր-



Ս. Բարիսովարյանը
ուսանողական տարիներին

ՄԻԱՅՈՐ ՓՈ^Տ ՀԱԿԵՐԿՅԱՅՑ
ԴՊԼԱՆ



Սարգիս Բարխունյարյանը աշխատանքի պահին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՑՈՒՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԳՐԱՎԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1971.10.17. 31

վատորիա, ուր նրա ղեկավարը դարձյալ Շուլցն էր: Երաժշշ-
տական մշակույթի խոշոր կենտրոն Բեռլինը, Հարկավ, երի-
տասարդ Բարխուդարյանի երաժշտական մտահորիզոնի ընդ-
լայնմանը շատ նպաստեց: Այստեղ նա լսեց այնպիսի երա-
ժիշտների, ինչպիսիք էին Նիկիշը, Ռախմանինովը, Իզախն,
լսեց դաշնակահարուհի քույրեր Աղամյաններին և այլոց:
Բեռլինում նա ծանոթացավ Հայ նշանավոր երաժշտագետ ու
կոմպոզիտոր Սպիրիզոն Մելիքյանի հետ: Հայ ուսանողների
միության կազմակերպած Համերգին գործում մասնակցու-
թյուն ունեցան նրանք: Համերգի ընդարձակ ծրագրում բիշ-
տեղ շէին գրավում Հայկական երգերը, որոնցից մեկը վերա-
մշակել էր Բարխուդարյանը:

Զինվորական ծառայությունից խուսափելու համար նա
ստիպված էր ընդունվել Բեռլինի Համալսարանի իրավաբա-
նական ֆակուլտետը: Զուգընթացաբար, նա համառ ու հետե-
վողական պարապմունքներով ձեռք է բերում պրոֆեսիոնալ
ունակություններ և երկու տարի անց, 1909 թ., մեկնում Պե-
տերբուրգ՝ կոնսերվատորիա ընդունվելու: Բեռլինում նա բա-
վականաշափ տիրապետել էր դաշնամուր նվագելու արվես-
տին, այժմ ահա որոշել էր լրջորեն զբաղվել կոմպոզիցիա-
յով: Պետերբուրգում նա դասել էր առնում Ա. Ժիտոմիրսկուց
(կոմպոզիցիա) և Մ. Գնեսինից (հարմոնիա): Սկսնակ կոմ-
պոզիտորին Հանձնարարվեց Հայկական ժողովրդական թե-
մաներով մի գործ գրել: Այսպես ծնվեց Ս. Բարխուդարյանի
հիմնալի «Արևելյան պարերից» մեկը: Հենց այդ ստեղծագոր-
ծությունն էլ նա ներկայացրեց Պետերբուրգի կոնսերվատո-
րիա, պրոֆ. Վ. Շուշանիկովի դասարանն ընդունվելիս:

Անկասկած, պետերբուրգյան դպրոցն առավելապես նը-պաստեց կոմպոզիտորի ստեղծագործական անհատականու-թյան ճիշտ զարգացմանը: Հենց այստեղ էր Ռիմսկի-Կորսա-կովի ղեկավարությամբ ձևավորվել Ալ. Սպենդիարյանի տա-դանողը, այստեղ էին իրենց կրթությունը ստացել Մ. Եկմալ-յանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ռ. Մելիքյանը և ուրիշներ: Ռու-սական երաժշտական մշակույթի այս հոյակապ դարբնո-ցում, Հիրավի, շատ ավելի լավ էին հասկանում Հայանտանի երիտասարդ երաժիշտների առջև կանգնած խնդիրները, հաս-կանում էին այն վեհ կոչումը, որին պիտի նվիրվեին այդ երիտասարդները՝ ազգային ինքնուրույն կոմպոզիտորական դպրոցի ստեղծում ու հաստատում: Կոնսերվատորիայում աշխատում էին շսահմանափակել նրանց ակադեմիական չոր կաղապարներով, ջանում էին օգնել նրանց ճշտությամբ որո-շելու յուրաքանչյուրի ստեղծագործական ուղին: Միաժամա-նակ, երաժշտական Պետերբուրգի մթնոլորտն, ինքնըստինք-յան, չափազանց հարուստ էր ու հագեցած, երաժշտական առօրյան իր հետաքրքրությամբ չէր զիջում եվրոպական ցան-կացած քաղաքին: Տեղի էին ունենում ուշագրավ համերգ-ներ, օպերային բեմադրություններ, նշանավոր երաժիշտնե-րի ելույթներ: Տաղանդավոր երաժիշտն ագահությամբ ընդու-նում էր երաժշտական այդ տպավորությունները, աշխատում համառորեն ու ջանասիրությամբ:

Նրա հաջողություններն այնչափ ակնբախ էին, որ ավար-տելուց հետո նրան երկու տարով պահեցին կոնսերվատո-րիայում՝ կատարելագործվելու: Կոնսերվատորիայի խորհրդի որոշման մեջ դրված է. «Պետերբուրգի կոնսերվատորիայի

աշակերտ Սարգիս Բարխուդարովը, Հաջողությամբ ավարտելով կոմպոզիցիայի տեսության դասարանը, հետագա կատարելագործման նպատակով թողնված է գործնական կոմպոզիցիայի դասարանում։

Ուսումնառության տարիներին Բարխուդարյանը գրեց մի շարք ստեղծագործություններ, որոնց մեջ արդեն հստակութեն ձևավորվեցին կոմպոզիտորի ոճը և ստեղծագործական գրելաձեզ։ Կոնսերվատորիայից առաջ նրա վաղ շրջանի հորինման փորձերում¹ դժվար չէ նկատել նմանողության ձրգում, սալոնային սենտիմենտալ-ռոմանտիկ տրամադրություններ, իսկ երաժշտական լեզվում գերակշռող ելքուական ոճն էր, մաժորա-միջնորային հարմոնիկ ոլորտը։ Բայց կերպարային կերտվածքի ու հենքի առումով արդեն գծագրվում են Բարխուդարյանի ոճին հատուկ գծերը՝ նրբակերտություն, թեթևություն ու քնարականություն։ Իսկ Պետերբուրգյան շրջանի գործերը կոմպոզիտորի ստեղծագործական ոճի յուրահատկության նոր գծերն են արտացոլում։ Նրանց մեջ հստակորեն զրոնորվում է ազգային կոլորիտը, հայկական երաժշտության լադային ինքնատիպությունը։ Այս տեսակետից հատկանշական է մեծ տարածում գտած «Արևելյան պարերի» շարքը։ Դա կարելի է համարել դաշնամուրի համար գրված հայկական առաջին ինքնուրույն ստեղծագործու-

1 Առաջին գրառումը ալբոմում կատարված է 1903 թվականին։ Դա «Վալսն» է։ 1903—1909 թթ. այդ նույն ալբոմում երևացին շուրջ 40 փոքրիկ պիեսներ, որոնցից էին, օրինակ, «Առվակը», «Թրորոցային», «Իմ տրամադրությունը», «Եարաթ օր», «Հրաժեշտի երդ», վալսեր, քայլերդեր, առանց խոսքի երգեր և այլն։

թյունը: Մինչ այդ ստեղծվածները հիմնականում ժողովրդական մեղեղիների փոխազրումներ էին կամ մշակումներ: Թե Գ. Կորգանովի պիեսները, թե Ն. Տիգրանյանի սքանչելի մշակումները, իրենց արժեքավորությամբ հանդերձ, ինքնուրույն գործեր չեն: Դրանով իսկ Բարխուդարյանի «Արևելյան պարերը» հատուկ արժեք են ձեռք բերում: Միաժամանակ, գեղարվեստական տեսակիտից, այդ պիեսները շափաղանց հետաքրքիր ու ինքնատիպ են:

Այդ շարքի շորս պարերը նուրբ վրձնով նկարված գողտըրիկ պատկերներ են՝ նրբագեղ մանրանկարներ, որոնք աշքի են ընկնում ձեր ու արտահայտչամիջոցների հատուկ նըրբությամբ: Լադային փոփոխականությունը, հարմոնիկ լեզվի յուրօրինակ բույրը պարերին ներարկում են արևելյան անկըրկնելի կոլորիտ:

Առաջին պարը երկու հատվածից է կազմված՝ դանդաղ, բնույթով փոքր-ինչ անհանգիստ (ընդհատվող դարձվածքների հաջորդում), նկարագրական նախանվագ ու արագ պար: Մեղեղական կերպարը գեղեցիկ է, աշխույժ ու ընդունուելի ժարվածային գործիքներին նմանվող զապանակատիպ ոիթմը ասես մտրակում է պարը, «չերմացնում» այն: Կոմպոզիտորն այստեղ օգտագործում է հայկական քաղաքային երաժշտությանը հատուկ կրկնակի, երկակի լազը (Հիմնված մեծացրած սեկունդա ունեցող երկու տետրախորդների վրա՝ d-es-fis-g և a-b-cis-d): Լադային այդ որոշակի փոփոխականությունը պարի երաժշտությանը հաղորդում է հատուկ հմայք ու քնքություն:

Երկրորդը (d-moll) շափաղանց ինքնատիպ ու ար-

տահայտիչ պար է, ասես ամբողջովին հյուսված բարակ ու նուրբ թելերից: Մեղեղական նկարը քմահաճ է, նրբակերտ, նրան բնորոշ են ընդհատվող, կարծես օդում հալլող գծեր: Երաժշտությունը եթերային թեթևություն, թոփշքի տրամադրություն է ստեղծում, առաջ են գալիս երևակայական կերպարներ:

Երբ որդ պարն իր հետ մեկ ուրիշ, առավել «երկրային», կենսական կերպար է բերում: Ասերգային նախանվագը (Gravé) հիշեցնում է ժողովրդական գործիքային իմպրովիզացիաները: Նախանվագը բավական ծավալուն է և պատմողական բնույթ ունի: Ապա՝ հետեւում է արագ, պարային հատվածը: Շարժուն ուժմիկան, հարմոնիկ գույների ձկուն փոփոխությունները լադային ներկատախտակը ծածկում են վառ, կենդանի տոներով, ամբողջ պիեսին հաղորդելով գունեղ, պայծառ կլորիտ:

Շարքն ավարտվում է կենդանի, հեղաճկուն ու նրբագեղ չորրորդ պարով:

Բարխուսդարյանի «Արևելյան պարերը» իսկույն լայն ընդունելություն գտան, բազմիցս վերահրատարակվելով: Առաջացան մի շարք փոխադրումներ այլ գործիքների (Փլեյտա, շվի, քանոն), ինչպես և սիմֆոնիկ նվազախմբի ու ժողովը դական գործիքների անսամբլի համար:

Կոնսերվատորիան ավարտելիս, Ս. Բարխուսդարյանը որպես դիպլոմային աշխատանք ներկայացրեց դաշնամուրի սոսնատը: Այս ստեղծագործությունը դրականապես գնահատեցին Գլազունովի, Նիկոլաևի, Զերեպնինի և Վիտոլիի պես երաժշտների: Պետերբուրգի կոնսերվատորիայի մատյանում

պահպանվել են այդ սոնատի մասին կարծիքներ: Ահա թե ինչ է գրում Գլազունովը: «Մտքեր, որոնք արևելյան ժողովրդական կոլորիտ ունեն և տեղ-տեղ նշանակալից հետաքրքրություն են առաջացնում: Հենքը բազմազանություն չունի, գերակշռում է բավարար շափով ոճային, հարմոնիկ կերտվածքը»: Ահա և մեկ ուրիշ կարծիք: Պրոֆեսոր Վիտոլին գրում է: «Որպես զտարյուն օրիենտալիստ, նա իր երաժշտությունը շի կամենում հարմարեցնել ելքոպական տեխնիկային, դժվար ընդունելի է դաշնակահարի համար: Գուցե կգտնի իր նվազախմբային ոճը, թեև կարծես մեծ հնարամտությամբ աշքի շի ընկնում»: Պրոֆեսոր Վիտոլիի կարծիքը, անշուշտ, փոքր-ինչ կտրուկ է, բայց միաժամանակ ճիշտ է ներկայացնում իրողությունը՝ Բարխուդարյանն իր կոչմամբ փոքր ձկի կոմպոզիտոր է, մանրանվագի ասպարեզում վառ արտահայտված ոճով ու գրելաձեռով օժտված ստեղծագործող: Նրա ոճի խիստ բնորոշ նմուշները հանդիսացան հենց այդ տարիներին (1914—1915) գրված d-moll «Էսքիզն» ու հատկապես՝ «Ակվարելը»:

«Էսքիզը» իրենից ներկայացնում է քնարական մի մանրանվագ, որի մեջ մերթընդմերթ դրամատիկ շեշտեր են լըսվում: Ընդուսությունը, անգամ որոշ շափով սրտաճմլիկությունը, անկասկած, կոմպոզիտորի տուրքն են ոռմանտիկ տրամադրություններին: Այս փոքրիկ պիեսը ձկի տեսակետից շատ կուռ է ու ամբողջական, ձեռք է բերված սերտ կապակցություն, թեմատիկ նյութի զարգացման հոսունություն: Մտազբաղ նախանվագը, միջին աշխույժ մասը և որոշ շափով դրամատիկ ավարտը ինտոնացիոն տեսակետից սեր-

տորին միահյուսվում են, զարգացնելով նախանվագի մեղեդային նյութը:

Բարխուդարյանական ոճի ցայտուն արտահայտությունն է Հրաշալի «Ակվարելը» (1915): Նրին, թափանցիկ տոներով ներկված, լուսավոր ու մեղմ ժպիտով ներթափանցված այս ստեղծագործությունը կարծես արձակում է լուս ու բերկրանք, գարնան բույրերով շնչում: Որքա՞ն շնորհալիություն ու հեղանազություն, գեղեցկության զգացմունքի որքան մաքրություն ու նրբություն կա այս մանրանվագում: Այն կատարյալ է ու անկրկնելի: Ըստ ձևի միամաս այդ պիեսը կառուցված է մեղեղային մի զարձվածքի զարգացման վրա, բոլորակված միատիպ ոիթմի ու հենքի շրջանակներով: Մեղեղային նկարի փոքրիկ թոփշքները «վեր են ճախրում» սահուն ու հանդարտ: Մեղեդու թեթևակի պտույտները նման են թիթեռի թոփշքին, թափանցիկ թեկրի մեղմիկ բզզոցին:

«Ակվարելը» լայն տարածում գտած պիեսներից մեկն է: Պիեսը նվագում են ամենատարբեր գործիքներով, գոյություն ունեն ժողովրդական գործիքների համար մի շարք փոխադրումներ: «Ակվարելի» հանրահայտությունն ու երկարակեցությունը նրա գեղարվեստական բարձր հատկանիշների ապացույցն է:



1917 թվականին Բարխուդարյանը վերադարձավ Թիֆլիս՝ կնոջ և երկու երեխաների (Սոկրատի և Իդայի) հետ: Սկզբանական շրջանում երիտասարդ երաժշտի համար դժվա-

րություններ ստեղծվեցին. Անդրկռվկասում ծայր էին առել բուրժուական նացիոնալիստների՝ դաշնակցականների, մենաշեփուների և մուսաֆաթականների կամայականությունները: Հասարակական կյանքը շիկացած էր ազգային թշնամանքի հրահրումով և, բնականաբար, նման պայմաններում գեղարվեստական-մշակութային կյանքը որոշ շափով անտեսված ու երկրորդական էր համարվում: Բարխուդարյանը ստիպված էր ծառայության մտնել քաղաքային վարչություն, որպես բնակարանային բաժնի վերգրման հանձնաժողովի անդամ: Շուրջ մեկ տարի նա աշխատեց այդտեղ: Շուտով նրան հաջողվեց մուտք գործել քաղաքի երաժշտական կյանքը: Մինչև սովետական իշխանության հաստատումը Թիֆլիսը հայկական մշակութային կյանքի կենտրոնն էր, և քաղաքում էին հավաքված բազմաթիվ հայ երաժիշտներ: Նրանք կազմակերպեցին հայկական երաժշտական ընկերություն, որը զեկավարում էր Հովսեփ Տեր-Դավթյանը: Ընկերության վարչության կազմում էին Սպիրիդոն Մելիքյանը, Արմեն Տիգրանյանը, Յովհան Սպենդիարյանը, Նինա Դոլուխանովան, Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշներ: Ընկերությունն իր խնդիրն էր համարում նպաստել երաժշտական կրթության տարածմանը, հայ երաժշտության զարգացմանը, խրախուսել հայ կոմպոզիտորներին, կատարողներին և դասատուներին, կարգավորել երաժշտության ուսուցման գործը, կազմակերպել համերգներ, հրատարակել նոտային գրականություն, հավաքել ու ձայնագրել ժողովրդական երգեր և այլն:

Ընկերության նախաձեռնությամբ 1914 թ. արշավախումբը մեկնեց Եփրակ: Կոմպոզիտորներ Սպիրիդոն Մելիքյանը և



Չախից աշխատավորներ Կ. Հ. Զարարյան, Ա. Գ. Տեր-
Պետրյան, Ա. Ա. Սպենդիարյան, Վ. Գ. Տալլան և Ս. Վ.
Բարիստարյան:



Չախից աջ՝ Հ. Լ. Մտեմիանյան, Վ. Գ. Տալլան, Ք. Ս. Սուզան, Թ. Ա. Քոչ-
նարյան, Կ. Հ. Հաբարյան և Ս. Ի. Բարիսովարյան



A 9728

Անուշավան Տեր-Ղևոնդյանը երկար ժամանակ շրջեցին այդ
անշափ հետաքրքիր ու բանահյուսությամբ հարուստ շրջա-
նումը նրանք Փոնողրաֆի օգնությամբ 180 երգ ձայնագրեցին:
ենց ուղեկորության ընթացքում՝ արժեքավոր ավանդ մըտ-
նելով հայկական երաժշտական բանահյուսության գանձա-
րանում։ Միաժամանակ, այդ երգերը հարուստ նյութ էին
հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորական ստեղծագործության
համար։ Սանոթանալով այդ նյութերին, թարխութարյանը
իր համար հայտնաբերեց ժողովրդական երգարվեստի ա-
նազարտ նմուշներ, հասկացավ հայկական միաձայն երա-
ժշտության լադային կառուցվածքի ինքնատիպությունը։

Կոմպոզիտորի համար մեծ նուանակություն ունեցավ նաև
ծանոթությունը Կոմիտասի մշակումների հետ։ Դա նկատելի
շրջադարձ առաջ բերեց նրա ստեղծագործության մեջ, ստի-
պեց կոմպոզիտորին ավելի խորն ըմբռնել երաժշտական աղ-
դային ոճի առանձնահատկությունները։ Ու եթե Բարխութար-
յանի ստեղծագործության մեջ մինչ այդ իշխում էր համա-
հարթված համակովկասյան-արևելյան մի ոճ, ապա այժմ նա
սկսեց առավել խստապահանջությամբ ու բժախնդրությամբ
վերաբերվել իր գործերին։ Բարխութարյանի երաժշտությունը
ավելի ու ավելի է դրսեռում հայկական ժողովրդական երա-
ժշտության լադային կառուցվածքի յուրահատկությունները։
Ճիշտ է, մինչ այդ էլ դրանք արտացոլվում էին նրա գործե-
րում, բայց առավելապես լսողական իներցիայի, բան ազգա-

1 «Երակի երգեր» ժողովածուն հրատարակվեց 1917 թ. Թիֆլիսի հայ-
կական երաժշտական ընկերության կողմից։



լին ոճի առանձնահատուկ գծերի գիտակցված ընտրության շնորհիվ: Այս տարիներին ստեղծված գործերում կոմպոզիտորի տաղանդը օրեցօր հղկվում է, համարյա վերջնականապես ձևավորվում է նրա անհատական ոճը և ներառնում Բարխուդարյանի ստեղծագործության տիպական բոլոր կողմերը թե լեզվի, արտահայտչամիջոցների ու հարմոնիկ առանձնահատկությունների և թե կերպարային կառուցման ոլորտներում:

Հիշյալ տարիների գործերից առավել հետաքրքրություն են ներկայացնում «Հեքիաթը», «Նոկտյուրնը», «Օրորոցայինը» (1917), «Աշնանայինը» (1918)՝ բոլորը բնարական պիեսներ, շղարշված թեթև տրամությամբ: «Հեքիաթը» (cis-moll) փոքրիկ պիես է, որի միջոցով կոմպոզիտորը ցանկանում է ըստեղծել ժողովրդական հեքիաթների շափակորված տոնին համապատասխան պատկերներ ու տրամադրություն: Մայրադիր մասերի միանման հենքը (ձևը պարզ է, եռամաս) համարյա յուրաքանչյուր տակտում կրկնվող ոիթմիկ բանաձևով, երաժշտությանը հաղորդում է պատմողական հանգիստ բնույթ: Պատմության կովմինացիոն փուլը միշտն մասում է, առավել եռանդուն տեմպով, առավել հարաճուն զարգացմամբ, որից հետո վերստին հաստատվում է սկզբնական հավասարակշռված տոնը:

«Հեքիաթը», հավանաբար, տոգորված է թումանյանական հեքիաթների պատկերներով, քանի որ կոմպոզիտորն այն նվիրել է հայ մեծ բանաստեղծին ու Հովհաննես Թումանյանին ընծայադրել՝ նրա ծննդյան հիսնամյակի օրը: Այդուհանդերձ, Բարխուդարյանին շհաջողվեց երաժշտության մեջ լիո-

պին ներդնել ժողովրդականության, ազգային ուրույնության այն ոգին, ինքնատիպ այն երանգներն ու նուրբ բանաստեղծականությունը, որոնք հայկական հեքիաթը տարրերում են մյուսներից: Բացի այդ, ինքնըստինքյան բավարար հետաքրքրություն չի ներկայացնում նաև պիեսի մեղեդային՝ որոշ շափով զգույն նյութը: Երաժշտության հենքային բազմազանության և ընդհանուր բնույթի տեսակետից առավել հետաքրքրական է «Նոկայուրնը» (1917), համեմատաբար ծավալուն մի պիես, որի երաժշտությունը բավական ընդուստ է, թրթուն: Ռոմանտիկ բնորոշ զգացմունքներով տոգորված այդ գործը արտահայտում է քնարական հերոսի հոգեկան խոռովը: Պիեսի երաժշտական լեզվի մեջ երևան են գալիս վրացական երաժշտությունից, ավելի ճիշտ՝ թիֆլիսյան քաղաքային երգից եկող ինտոնացիոն որոշ դարձվածքներ: Նման ներմուծումը, ճշմարիտն ասած, պետք է որ լիներ, քանի որ հազիվ թե հնարավոր լինի խուսափել գիտակցության, ավելի ճիշտ՝ ենթագիտակցության մեջ այն ժողովրդի երաժշտության ինտոնացիաների ներթափանցումից, որի միջավայրում ապրում է արվեստագետը: Եվ որքան էլ Բարիուդարյանը շանաց պահպանել իր երաժշտական ոճի անաղարտությունն ու ազգային որոշակիությունը, անկախ իրենից, երևան եկան վրացական երաժշտության (քաղաքային) տարրեր, որոնք, ամրապնդվելով, դարձան նրա երաժշտական լեզվի օրգանական մասը: «Նոկայուրնի» մեջ կարելի է նշել վրացական քաղաքային երգին բնորոշ դարձվածքների մի ամբողջ շարք: Հետագայում նույնպես Բարիուդարյանի ստեղծագործության մեջ հաճախակի են կրկնվում վրացական դարձվածքները: Հե-

տեսաբար, վաղ շրջանի պիեսներից մեկում՝ «Նոկտյուրնում», դրանց առկայությունը պատահականություն չէ, այլ նրա երաժշտական ոճի առանձնահատկություններից մեկը:

Քնարական մի պիես կս՝ փափուկ, նուրբ տոներով հագեցած, մեղեղային շարժման զարմանալի ճկունությամբ գերող «Օրորոցայինը»: Չափավոր, սահուն, «ճոճվող» նվագակցությամբ հնչում է երգային բնույթի ծորուն, արտահայտիչ մեղեղին: Կոմպոզիտորն ասես լսել է այդ հիանալի, չափազանց քնքուշ մեղեղին օրորոցի մեջ մանկանը քննցնող մոր շուրջերից, որն այդ երգի մեջ է դրել իր սիրո ու քնքության ողջ կարողությունը:

Այս պիեսի հիմքն են հանդիսացել քաղաքային միջավայրում լայնորեն տարածված օրորոցայինները, իրենց բնորոշությունը՝ հավասարաշափ ճոճմամբ, մեղեղային անցումներում նուրբ, «թաքուն» սինկոպաններով, արևելյան երաժշտությանը հատուկ մեծացրած սեկունդայով:

Ու թեև «Օրորոցայինում» բավարար հստակությամբ շի արտահայտված հայկական ժողովրդական լադայնությունը, այնուամենայնիվ պիեսը զերծ է նաև եվրոպական ու վրացական դարձվածքներից: Այն գրված է կովկասյան քաղաքային երգերի ոճով, որն, ի գեպ, կոմպոզիտորի ստեղծագործության սնուցման հիմնական աղբյուրն է եղել:

Քնարական ապրումներով, բնության աշնանային թոշնումի պատկերներով է տողորված «Աշնանային» պիեսը (Տիս-տոլլ, 1918): Երկու կերպար, երկու տրամադրություն է իշխում այստեղ՝ մի կողմից աշնան թախծաշատ ու հուղիչ

պատկերից ազդված մարդու հոգեվիճակն ու զգացմունքները, յուս կողմից՝ երաժշտական յուրօրինակ բնանկար ստեղծելու փորձը:

Խորունկ մտորումներ, կսկիծ պատճառող տրտմության և դատապարտվածության զգացումներով ներծծված հայեցողական քնարականություն՝ ահա պիեսի ծավալուն նախանըվագի (Largo) տրամադրությունների շրջանակը: Երաժշտական դարձվածավորումն այստեղ կառուցված է կարճ, բնդհատ մոտիվների, արտահայտիչ ասերգայնության վրա: Երաժշտությանը հատուկ արտահայտչականություն է հաղորդում ստորին ուղիստրի երանդային թավ գունավորումը և տոնիկայի վրա հիմնված բասային ձայնառության խուզ հնչողությունը: Դա ընդգծում է ասերգայնության բնույթը, նրա մշուշու կենտրոնացվածությունը: Պիեսի հիմնական հատվածը բնանկարային պատկերն է: Չափի հաճախակի փոփոխումը ($\frac{2}{4}$ — $\frac{3}{4}$, $\frac{4}{4}$), շարժուն հենքը, երաժշտական դարձվածքների բնդուստ սլացքը, կրկնվող ֆիգուրացիաները՝ այս ամենը մի կողմից ասես ներկայացնում է աշնան տեսրմաթափի պատկերը, մյուս կողմից՝ երաժշտությանը հազորում հուզական թրթիու: Վերջում երաժշտության մեջ ներթափանցում են նախանվագի առանձին ինտոնացիաներ, որոնք օրգանապես ձուլվում են ընդհանուր հենքին: Հերոսի քնարական ապրումները կարծես հալվում են բնության կերպարների մեջ:

«Աշնանային» պիեսը սիթմական տեսակետից հարուստ է, հենքը՝ բազմազան, հարմոնիկ լեզուն ձկուն է ու հետաքըրրիր, ալտերացիաներով, ուշագրավ զուգորդումներով ու հա-

չորդականություններով առատ: «Աշնանային»-ը Բարխու-
դարյանի լավագույն ու առավել բանաստեղծական ստեղծա-
գործություններից մեկն է:



Գնալով ընդլայնվում էին Բարխուդարյանի երաժշտական
կապերը թիֆլիսում. աստիճանաբար կազմակերպվեց գեղար-
վեստական մի խմբակ, որի մեջ էին մտնում Ս. Բարխուդար-
յանը, Ք. Քուշնարյանը, Օ. Տեր-Գրիգորյանը, Ա. Տեր-Ղևոնդ-
յանը, Գր. Միրզոյանը (Մյունի): Նրանք հաճախակի հավաք-
վում էին կամ Տեր-Գրիգորյանի, կամ Բարխուդարյանի մոտ,
կատարում իրենց ստեղծագործությունները, խորապես ծա-
նոթանում հայկական երաժշտությանը: Մասնավորապես,
Մյունին նրանց ծանոթացնում էր հայկական նոտագրությա-
նը (ըստ Լիմոնջյանի), շարականներին, ժողովրդական եր-
գերին և այլն: Տաղանդավոր երաժիշտները մի ջերմ ձգտում
ունեին՝ հայկական երաժշտությունը հանել լայն ասպարեզ,
պրոֆեսիոնալ արժանի մակարդակի հասցնել այն: Հատկա-
պես նրանց շատ էր անհանգստացնում երաժշտական մշա-
կույթի որևիցե մի օջախի բացակայությունը երեանում:
Որոշվեց Հայաստանի մայրաքաղաքում կազմակերպել խըմ-
բավարական-հրահանգչական դասընթացներ:

Այդ իսկ նպատակով 1919 թ. Ս. Բարխուդարյանը եկավ
Երևան: Դասընթացներ կազմակերպեց, աշակերտներ հավա-
քեց (14—17 տարեկանից մինչև 30), մանկավարժներ հրա-
վիրեց՝ Աբգարյանին (դաշնամուր), Թ. Սաֆարյանին (ջու-

թակ), իսկ ինքը հանձն առավ աշխատել երդշախմբի հետ: Դասընթացները կարճ կյանք ունեցան՝ մեկ տարի, բայց և այդ կարճ ժամանակում որոշակի գործի սկիզբ դրվեց: Երգչախմբի կատարմամբ երեանում առաջին անգամ հնչեց «Ինտերնացիոնալ»-ը, զիմավորելով կարմիր բանակի մուտքը երեան:

Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո երեանի երաժշտական կյանքը հատուկ հոգածության նյութ դարձավ: Ստեղծվեցին տարրեր օջախներ: Գնահատելով Ս. Բարխուդարյանի երաժշտական-հասարակական գործունեությունը, Հայաստանի լուսժողկոմատը նրան նշանակեց երաժշտական բաժնի վարիչ: Այդ շրջանում Ս. Բարխուդարյանի հետ եռանդուն աշխատանք էին ծավալում Մ. Աղայանը, Շ. Տալյանը, Մ. Միրզոյանը, Ե. Կագարյանը: Կազմակերպում էին գերազանցապես հայ կոմպոզիտորների ստեղծագործություններն ամփոփող համերգներ, հաճախակի լինում շրջաններում՝ էջմիածնում, Աշտարակում, Ղամարլուում և այլուր: Ավելորդ է հաստատելը, թե որքան մեծ նշանակություն ուներ նրանց կատարածն այն օրերին: Պետք էր մեծ եռանդ ու խանդավառություն՝ հաղթահարելու բոլոր այն դժվարությունները, որոնք անխուսափելիորեն ծառանում էին յուրաքանչյուր քայլափոխին: Բայց և այնպես Բարխուդարյանը շուտով ստիպված էր վերադառնալ Թիֆլիս: 1921 թ. դաշնակցական ավանդությունի հետևանքով երեանի երաժշտական կյանքն առժամանակ դադարեց: Թիֆլիսում, Հայարտանը խմբավորվեցին հայ մշակույթի գործիչները, և Ս. Բարխուդարյանը շուտով անդամը դարձավ երաժշտական

մասնաճյուղի, որին արդեն աշխատակցում էին Ռ. Մելիքյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Տիգրանյանը, Կ. Զաքարյանը, Հ. Հովհաննիսյանը: Մասնաճյուղն ընդգրկում էր նաև կատարողական ուժեր՝ Հ. Տեր-Դավթյանին, Մ. Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյանին, Երգչուջի Ա. Բարալյանին և այլոց:

Չնայած նյութական դժվարություններին ու հոգեկան անբավարարվածությանը, երիտասարդ կոմպոզիտորը չէր դադարում ստեղծագործել: Քաղաքական բուռն իրադարձությունները, որոնք էապես փոխել էին Անդրկովկասի ժողովուրդների ապրելակերպը, մեծապես ազդել նրանց մտածողության, աշխարհայացքի վրա, հատուկ բարդություններ էին ստեղծել ազատ ստեղծագործությամբ զբաղվող մտավորականության համար: Այդուհանդերձ, 1921 թ. երեան եկան թարխուղարյանի հիանալի «Նազ-պարը» և ոե-դիեզ մինոր պոեմը («Ճգնավորի խցիկում»):

«Նազ-պարը» (Փա-դիեզ մինոր) ժողովրդական ոգով գրված պարային պիես է, որն ունի ժողովրդական քնարական պարի բոլոր յուրահատկություններն իր հրաշալի ճկունությամբ ու թեթևությամբ: Հազվագյուտ գեղեցկության ու հմայքի մի նուրբ մանրանվագ է դա: Շարժուն, երգային մեղեդիականությունը կոմպոզիտորական երջանիկ գյուտերից մեկն է: Պիեսը զարգանում է ազատ ու անբռնազբոսիկ ոգով, յուրաքանչյուր նոր պարբերույթում բացահայտվելով տարբերակային նոր շարադրանքով: Ծիթմական սովորական $\frac{6}{8}$ բանաձևեր՝ ժողովրդական պարերին հատուկ սինկոպաններով ու հապաղումներով, «դհոլային» ոիթմի թեթև կտկտոցով, կոմպոզիտորը շատ ճկուն է օգտագործում, խուսափելով քա-

ուակուսայնությունից: Դրա նպատակն է նաև ոիթմական պատկերի տակտից տակտ փոփոխումը, որը երաժշտության ընթացքին հաղորդում է զարմանալի սահունություն և կապակցվածություն:

«Նազ-պարի» հարմոնիկ հիմքը բավականին շարժուն է: Կանգ շառնելով հարմոնիկ որևէ մեկ ֆունկցիայի վրա, նա տղում է բասային տոնը մինոր լադի ամենամոտ աստիճաններով, այսպիսով մեղեղուն հաղորդելով ներքին հոսք ու գունեղություն: «Նազ-պարը» Բարխուդարյանի ստեղծագործության հրաշալի բանաստեղծական էջերից մեկն է: Պիեսը նվիրված է կոմպոզիտորի կնոջը՝ տիկին Արմենուհուն: Այս պարի հանրահայտությունն, իրոք, նախանձելի է: Այն ոչ միայն գիտե ու սիրում է ժողովրդը, այլ նաև ընդունում է որպես ժողովրդական և ոչ թե պրոֆեսիոնալ ստեղծագործության նմուշ: Հետաքրքիր մի դեպք է կատարվել կոմպոզիտորի հետ: Երբ կնոջ հետ հյուրընկալվում էր կիրովականում, նրան առաջարկեցին լսել մի թառ նվազողի ու նոտա գրել ժողովրդական որոշ մեղեղիներ: Ժողովրդական բանահյուսության մի շարք գործերի հետ մեկտեղ, վերջինս նվագեց նաև «Նազ-պարը», իհարկե, իր մեկնարանությամբ:

Այլ բնույթի գործ է պոեմը (dis-moll), որը կրում է «Ճգնավորի խցիկում» ենթավերնագիրը: Երաժշտությունը տոգորված է ոռմանտիկ տրամադրությամբ, Բարխուդարյանի համար անսովոր հուզվածությամբ, դրամատիկ պոոթ-կումներով: Ի տարբերություն նրա մյուս պիեսների, այստեղ ավելի լայն են բացված հարմոնիկ շրջանակները, օգտագործված են առավել համարձակ համագրումներ ու զուգա-

դրումներ՝ ալտերացիայի նշանների և ներքին տռնայնական շեղումների մեծ առատությամբ։ Ճկուն է դարձել ոիթմը, նկատելիորեն բազմազան ու պլաստիկ է հենքը, որն ամերուց պիսին կոնցերտային փայլ ու թափ է հաղորդում։ Ինդիստրային հեռավոր հարաբերակցությունները, պասաժային ու ակորդային տեխնիկայի զուգորդումները վերին ուղղությունում կոնցերտային «որոտացող» ֆիգուրացիաներով երաժշտության բնույթի մեջ դրամատիզմի տարր են մտցրնում։ Պոեմի ողջ երաժշտությունը ներթափանցված է հուզված ժարումների, հոգեկան խռովքի ոգով։

Այս գործի կերպարային կերտութածքում խախտված է կոմպոզիտորի ստեղծագործական նկարագրին հատուկ հոգեկան հավասարակշռությունը և անխռովությունը։ Հավանաբար, այդ շրջանում նա ստեղծագործական որոնումների մեջ էր ու իր խռովաճույզ տրամադրություններն արտահայտել է ուժանտիկ, ընդուստ կերպով։

1922 թ. Բարխուդարյանը համերգային մեծ շրջագայություն ձեռնարկեց։ Երկու տարի շարունակ նա ստեղծագործական համերգներ էր տալիս Թբիլիսիում, Բաքվում, Բաթումիում, Ստեփանավանում, Ալեքսանդրապոլում, նաև Մոսկվայում ու Լենինգրադում։ Կոմպոզիտորի ստեղծագործական պաշտան այդ ժամանակ բավական հարուստ էր, նա արդեն ստեղծել էր իր գործիքային լավագույն մանրանվագները, ստեղծագործական ոճն արդեն համարյա վերջնականացես ձեւավորված էր, և նա ցուցադրելու ահագին բան ուներ։ Նրա ելույթներն ամենուրեք մեծ հաջողություն էին ունե-

նում: Մամուլն ըստ արժանվույն էր գնահատում կոմպոզիտորի ստեղծագործությունները:

«Սարգիս Բարխուդարյանը... պատկանում է Հայկական երաժշտության երիտասարդ դպրոցի վերջին 15 տարիների ընթացքում զարգացած առավել վառ, տաղանդավոր անհատականությունների թվին: Հուզիչ անկեղծություն և նրբագեղ պարզություն՝ ահա նրա երաժշտության լավագույն տարրերը», — այսպես է գրում «Զարյա վոստոկա» լրագիրը 1924 թ. հոկտեմբերի 25-ին:

Գլազունովը դրվատական կարծիք հայտնեց նրա դաշնամուրային պիեսների շարքի մասին (28 հունվարի 1923 թ.): «Լսելով Ս. Վ. Բարխուդարյանի ստեղծագործությունները, կարող եմ վկայել, որ օժտված է ստեղծագործական աներկերա շնորհքով: Նրա երկերը տոգորված են ազգային վառ գունավորմամբ, աշքի են ընկնում անկեղծությամբ, նրբագեղությամբ ու կուռ ձևով, որը հավաստում է հեղինակի հասուն ու ավարտուն երաժիշտ լինելը: Ցանկալի կլիներ, որպեսզի նրա փոքրիկ ստեղծագործությունները հարատարակվեին որպես նշանակալի հետաքրքրություն ներկայացնող նյութ»:

Համերգային այդ տեսական ուղևորության շրջանում կայացան նաև մի քանի անսովոր ելույթներ: Այսպես, օրինակ, Հովհաննես Թումանյանի տանը տված համերգը: Այդ շրջանում բանաստեղծը հիվանդ էր, բայց շատ էր կամենում լսել կոմպոզիտորին, որի ստեղծագործությունը նա բարձր էր գնահատում: Եվ այսպես, 1922 թ. մայիսի 14-ին կոյացավ այդ անսովոր համերգը, անշափի կամերային պայմաններում:

Ուղևորության ընթացքում կոմպոզիտորը ծանոթացավ միշտ մարդկանց հետ և այդ հետաքրքիր հանդիպումները կարևոր նշանակություն ունեցան նրա համար: Մոսկվայում նա ծանոթացավ Մոսկվայի հայկական երաժշտության խօմբակի մասնակիցների՝ Ս. Առամազյանի, Գ. Բուղազյանի, Գ. Գեղարիկի, Մ. Մազմանյանի և ուրիշների հետ: Այստեղ էլ հենց կայացավ նրա հանդիպումը նշանավոր դիրիժյոր, այն ժամանակ Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Կ. Սարաջենի հետ: Նման երաժիշտների հետ շփումը շատ բան տվեց կոմպոզիտորին: Նրանցից յուրաքանչյուրն ըստ կարելույն նպաստեց Բարիսուղարյանի գործերի պրոպագանդմանը: Մասնավորապես, Բուղազյանը լարային կվարտետի համար փոխադրեց ոե-մինոր էսքիզը, Ասլարմազյանը՝ սիմֆինոր էսքիզը և «Ակվարելը», իսկ հետագայում նաև՝ «Նազարյան» ու Բարիսուղարյանի այլ ստեղծագործություններ: Ստեղծագործական բազմաթիվ արժեքավոր խորհուրդներ ըստացավ նա հետագայում Սարաջենից: Երիտասարդ հայ երաժիշտների խմբակը խանդավառ ընդունեց արվեստակից ընկերոջը, կազմակերպեցին հանդիսավոր երեկո-մեծարում, և կոմպոզիտորին հանձնեցին թեև փոքր-ինչ վերամբարձ, բայց և հիւզիչ, անկեղծությամբ լի մի պատվո հասցե.

«Այս օրը մեզ համար նշանակալի է, որովհետև մեր երիտասարդ խմբակը նոր լիցք ստացավ: Զեր ժամանումը Մոսկվա խոր ազդեցություն թողեց մեր խմբակի գործունեության վրա: Տաղանդավոր երաժշտի ամուր ձեռքով Դուք մատնացուց արեցիք այն ուղին, որով միայն կարելի է հասնել հայկական խկական երաժշտության գագաթներին»:

Հենց այստեղ, Մոսկվայում, 1923 թ. սովետական կոմ-
պոզիտորների միության վարչության անդամների միաձայն
որոշմամբ Ս. Վ. Բարխուդարյանն ընդունվեց միության շար-
քերը: Վարչության նիստում նա կատարեց իր ստեղծագոր-
ծությունները, ստանալով ներկա գտնվող Մյասկովսկու,
Գրեշանինովի, Գարբուզովի, Գեղիկեի, Վասիլենկոյի և այլոց
հավանությունը:

1923-ի աշնանը Բարխուդարյանի կյանքում կարևոր իրա-
դարձություն տեղի ունեցավ՝ նրան հրավիրեցին Թրիլիսիի
կոնսերվատորիա, առաջարկելով պոլիֆոնիայի դասարանի
ղեկավարումը: Այդ ժամանակից էլ նրա ճակատագիրը հա-
մարյա անխղելիորեն կապվեց երաժշտական կրթության այդ
հիմնալի օջախին: Իր մանկավարժական գործունեությունը
սկսելով պոլիֆոնիայից, Ս. Բարխուդարյանն աստիճանաբար
ստանձնեց նոր առարկաների դասավանդում, հետզհետե
դառնալով հմուտ ու բանիմաց մանկավարժ: 1924 թվակա-
նից, երբ Ա. Տեր-Ղեռնդյանը թողեց կոնսերվատորիան, նը-
րան վստահեցին հարմոնիայի դասարանը, իսկ հետագա-
յում, կոնսերվատորիայի դիրեկտոր և պրոֆեսոր Խոլիսով-
իկանովի Մոսկվա մեկնելուց հետո, Բարխուդարյանն սկսեց
վարել նաև ստեղծագործական դասարանը: Այդ բոլոր ա-
ռարկաները նա վարում էր ընդհուպ մինչև 1928 թ.: մինչև
ստեղծագործական գործուղումը կենինգրադ:

Նրա ստեղծագործությունների ցանկն այդ տարիներին
համալրվեց հետաքրքիր նոր գործերով: 1926-ին նա կատա-
րեց հայկական ժողովրդական երեք պարերի դաշնամուրային

փոխադրումներ, իսկ 1927-ին՝ Հայկական ժողովրդական երգերի մի քանի մշակումներ:

Իր մշակումներում («Սամով աղջիկ», «Մաճկալ», «Սարի աղջիկ», «Դլե յաման», «Սիրուհիս», «Քյոռ-օղլի») Բարխուդարյանը հանդես բերեց բարձր ճաշակ ու գեղարվեստական տակտ, պահպանելով ժողովրդական մեղեդիների գեղեցկությունն ու անկրկնելի ինքնատիպությունը, դրանց ոճական անաղարտությունը չխախտելով հարմոնիկ ու հենքային ավելորդություններով։ Այդ մշակումների մասին նշենք հեղինակավոր այնպիսի երաժիշտների կարծիքներ, ինչպիսիք են Ք. Քուշնարյանը, Վ. Կալաֆատին, Մ. Շտեյնբերգը.

«Ս. Բարխուդարյանի «Սարի աղջիկ», «Սամով աղջիկ», «Դլե յաման», «Թարաքյամա» ստեղծագործությունները, որոնք ես նայեցի, աչքի են ընկնում հենքի մեծ ճաշակով ու գրելաձևի նրբագեղությամբ։ Իր այս մշակումներով Ս. Վ. Բարխուդարյանը երաժշտական մեր աղքատ գրականությանն ավելացրեց ևս մի քանի էջ, որոնք հորինված են անկրկնելի, միայն Բարխուդարյանին հատուկ ոճով։ Այդ մշակումների բացառիկ անկեղծությունն ու երաժշտականությունը, կապված հովվերգական միամտությանը, դրանք մատչելի են դարձնում ոչ միայն Արևելքի մարդկանց, այլ նաև հաջողություն են վաստակում բացարձակապես օտար միջավայրում» (Ք. Քուշնարյան, 8 ապրիլի, 1929 թ., Լենինգրադ):

Ահա թե ինչ է գրում կոմպոզիտորի նախկին մանկավարժ Կալաֆատին։ «Ս. Վ. Բարխուդարյանի երաժշտական ստեղծագործությունները աշքի են ընկնում թարմությամբ, անկեղծությամբ, մեծ հնարամտությամբ ու հետաքրքիր հենքով»:

(Վ. Պ. Կալաֆատի, 31 մարտի, 1929 թ., Լենինգրադ):

Եվ վերջապես, Մ. Շտեյնբերգի կարծիքը:

«...Բոլոր պիեսները, առանց որևէցե հավակնության, երաժշտական նրբին ճաշակ են վկայում: Ներդաշնակումն ամենուրեք անշափ գեղեցիկ է, ձայնատարությունը՝ բծախընդիր, որը վկայում է անցած լավ դպրոցի մասին: Որոշ շափով ինձ համար դժվար է դատել, թե մեղեղիների ներդաշնակումը որպիսի ճշտությամբ է համապատասխանում կովկասյան եղանակներին, բայց ամեն ինչ բացարձակապես բնական է: Ամենից շատ ինձ գուր եկավ «Դիե յաման» երգը, որ տոգորված է անկեղծ, զերմ զգացմունքով, բայց և մյուս պիեսները նույնպես լավն են» (Մ. Շտեյնբերգ, 15 ապրիլի, 1929 թ., Լենինգրադ):

Հատկապես արժեքավոր է Ք. Քուշնարյանի կարծիքը, որպես կարծիք մի երաժշտի, որը խորապես ուսումնասիրել էր հայկական ժողովրդական երաժշտության բնույթը: Այդուհանդեռ, պակաս արժեքավոր չեն և մյուս երկու կարծիքները: Առանց հայկական ժողովրդական յուրահատկություններն իմանալու, միայն մշակումների բնական ու ինքնատիպ հրնացումից ելնելով, Կալաֆատին և Շտեյնբերգը ճիշտ են նշել Բարխուդարյանի այդ աշխատանքի գլխավոր արժանիքը՝ պագային ինքնատիպություն, հստակ արտահայտված յուրօրինակ կոլորիտ:

Ժողովրդական երգերի մշակումներով Բարխուդարյանը հանդես եկավ արդեն որպես կոմպոզիտոր, որը հիանալի տիրապետում է հայկական ժողովրդական երգի լադային կառուցվածքի յուրահատկություն, հստակ արտահայտված յուրօրինակ կոլորիտ:

տիպ դրսնորումներին։ Նրա մշակումներն աշքի են ընկնում ընականությամբ ու պարզությամբ, առանց նվագակցության ավելորդությունների, Կոմպոզիտորը հմտությամբ ընդգծել է լոկ ժողովրդական մելոսի գեղեցկությունն ու անաղարտությունը, պարզությամբ ու անբռնազրոս կերպով ընդգծելով այս կամ այն դրվագը։ Այստեղ, մասնավորապես՝ «Ծամով աղջիկ», «Քյոռ-օղլի» և «Մաճկալ» երգերի նվագակցության առումով արդեն կարելի է խոսել մշակման կոմիտասյան սկզբունքների յուրացման մասին։ Անկասկած, Կոմիտասից է դալիս թեթև, չծանրաբեռնված հենքը, շրջանակող այն գծերի մաքրությունը, որոնց մեջ պարզորոշ երեսում է հենց երգի մեղեղային նկարագիրը։ Դա մշակումների կարևոր արժանիքն է։ Պակաս կարևոր չէ մեկ ուրիշ հանգամանք՝ որքան էլ ցայտուն լինի կոմիտասյան սկզբունքների ազգեցությունը, այդուհանդերձ դրանք բեկվում են հեղինակային ուրույն դրսեւորմամբ, ենթարկվում թարխուդարյանին հատուկ սկզբունքների, ոճի ու եղանակի։

Բարխուդարյանի ժողովրդական մեղեղիների մշակումները վկայում են կոմպոզիտորի կողմից ազգային ոճի անհատական յուրացումը։ Այդ անհատականը դրսեւորվում է հայկական լադայնության ու մաժորա-մինորային սիստեմի տարրերի բավականին օրգանական ձուլվածքի, հարմոնիայում զուտ հայկական լադային երևույթները եվրոպական հարմոնիկ հաջորդականությունների կամ կաղանաների հետ անբռնազրոս զուգորդման մեջ։ Որպես օրինակ, վերցնենք «Դլե յաման»-ը։ Մեղեղու մեջ մի-բեկարի և նվագակցության մեջ մի-դիեղի հարաբերակցությունը խիստ բնորոշ է հայկա-

կան լադայնությանը: Եվ անմիջապես դոմինանտային սեպտակորդի (V 7-ի) լուծումը տոնիկայի՝ զուտ եվրոպական կադանսավորում, որը բնորոշ չէ հայկական գեղջկական երգին իր պլադալությամբ: Ավտենտիկությունը հատուկ է քաղաքային եղանակներին, որոնք զանազան ազգեցություններ են կրել: Բայց և այնպես Բարխուդարյանի՝ լադային դրսեռումների նման միացությունները երբեք չեն ընկալվում որպես երաժշտական լեզվում էկլեկտիզմի արտահայտություն: Հենվելով քաղաքային բանահյուսության վրա, ազգային երաժշտական մշակույթի այդ բնագավառի հարմոնիկ և լադային ոլորտներում կոմպոզիտորը մտածում է օրգանապես:

Հայկական երաժշտության լադերի և հարմոնիկ հարաբերակցությունների առանձնահատկության հիմնավոր իմացությունը դրսենորվել է կոմպոզիտորի «Մաճկալ», «Ծամով աղջիկ», «Քյոռ-օղլի» երգերում: «Մաճկալում» հիմնականում նա օգտագործում է փոյուղիական լադը (իշեցված 4-րդ աստիճանով), որը բավականին բնորոշ է հայկական քաղաքային և ժողովրդական-պրոֆեսիոնալ (մշակումներ) երգին: Բայց և փոյուղիական լադի հիման վրա նա տալիս է զրաբնական, օրգանական զարգացումը, ազատությամբ գործի դնելով ուրիշ լադերի բնորոշ տոները (-III, +IV +VI և այլն), այդպիսով հարստացնելով կոլորիտը: Նվազակցության մեջ մեղեղային գիծն ընդօրինակող ինտոնացիաները տատանվում են լադային երկու՝ վերին մեղիանտային ու տոնիկական հենակետերի վրա:

Հատկանշական է զուգահեռ կվարտաների և կվինտաների հնչողությունը «Ծամով աղջիկ» երգում, որը նույնական

աղքային լադային հարմոնիայի յուրահատկությունն է (թեև ոչ միայն հայկական, այլ աղքային ցանկացած երաժշտության մեջ որոշակի յուրօրինակությամբ օգտագործվող): Կոմպոզիտորը բաց թողած տերցիաներով կվինտակորդները լայնորեն է օգտագործում «Քյոռ-օղլի» երգի նվազակցության մեջ: Կվինտակորդների, զուգահեռ կվինտաների հարաբերակցությունը և, գլխավորը՝ դոմինանտային հարմոնիայի բացակայությունը, այսինքն՝ պլազմալ ոլորտի գերիշխումը այդ մշակմանը հաղորդում է ժողովրդական հերոսների քաջագործությունները գովերգող հնագույն մեղեղիների ոգի:

Մշակման կոմիտասյան սկզբունքների զարգացումը երևան եկավ և այն պոլիֆոնիկ հնարանքներում, որոնցից օգտվում էր Բարխուղարյանը: Խնդիրը գլխավորապես նմանողական ու ենթաձայնային պոլիֆոնիայի հնարանքների մասին է, որոնք հանդիպում են համարյա բոլոր մշակումներում: Առավել բնորոշ է ձայնառության օգտագործումը, որի ֆոնի վրա նա հաճախ դիմում է նվազակցության մեջ վոկալ ինտոնացիաների նմանողությանը, հարստացնելով ու կերպափոխելով այն, հաճախ դարձնելով նոր կոնտրապունկտային մեղեղային գիծ:

Ժողովրդական երգերի վեց մշակումները Բարիւռուղարյանի արժեքավոր ավանդն են հայկական երաժշտության մեջ: Այդ մշակումներում մի կողմից արտահայտված է կոմպոզիտորի անհատական-ինքնատիպ ոճը, մյուս կողմից՝ ժողովրդական ընտրած եղանակների գեղեցկությունն ու հըմայքը:

Այդ շրջանի ինքնուրուցն ստեղծագործություններից արժեալ առանձնացնել «Սգո քայլերգը» դաշնամուրի համար, գրված Հովհաննես Թումանյանի մահվան առթիվ (1923), Ա. Խոյեցյանին նվիրված «Էլեգիան» թավշութակի համար (1923), «Աշուն» պրելյուդը (1923); Այդ պիեսները քիչ են տարբերվում նախկինում ստեղծված քնարական մանրանվագներից: Առավել հետաքրքրականը «Աշուն» երկրորդ պրելյուդն է: Պիեսի հարմոնիկ լեզուն յուրօրինակ է սեկունդային հարաբերակցությունների իր առատությամբ: Այս պիեսում կոմպոզիտորը նկատելի տուրք է տվել այն հմայիչ ոճին, որը հայկական երաժշտության մեջ մտցրեց Ռումանոս Մելիքյանը: Այստեղից էլ՝ ակորդային ազատ հաջորդականությունները, հարմոնիկ գունեղ «խաղերը», սեկունդային հագեցած շերտավորումները (մի ակորդում 2—3 սեկունդա), այստեղից էլ՝ մեղեդային գծերի որոշ փիլորունություն: Ամբողջությամբ վերցրած պիեսը շատ արտահայտիչ է, նրաաճաշակ, ասես ընդհատ-ընդհատ տպավորությունների հոսքի տակ արտահայտում է կրծող թախծի, անպատմելի տիսրության տրամադրություն:

1927 թ. Քարխուդարյանը գրում է լա-մինոր պոեմը դաշնամուրի համար և թավշութակի ու դաշնամուրի համար փոխադրում «Օրորոցայինը» և ոե-մինոր պրելյուդը:



Մանկավարժական աշխատանքը հրապուրեց Բարեկուդարյանին, և նա որոշեց երաժշտական գործունեության այդ բնագավառին նվիրել իր ժամանակի զգալի մասը: Բայց դրա

Համար անհրաժեշտ էր ձեռք բերել մանկավարժական հաստատուն հմտություններ և ունակություններ, հիմնավորված ու մտածված մեթոդիկա: 1928 թ. մեկ տարով նա մեկնում է Լենինգրադ, որտեղ հնարավորություն է ունենում ծանոթանալ տեսական առարկաների գասավանդման նոր մեթոդներին, միաժամանակ լսել երաժշտություն ու ծանոթանալ ստեղծագործական նոր ուղղությունների: Օգտավետ շատ բան վերցրեց նա պրոֆեսոր Վ. Վ. Շչերբաչովի ստեղծագործական, պրոֆեսոր Փ. Քուշնարյանի պոլիֆոնիայի, պրոֆ. Յու. Ն. Տյուլինի հարմոնիայի և այլոց դասարաններում: Բոլոր այս խոշոր մասնագետները, իրենց գործիք քաջ գիտակ մարդիկ, որոնք զարգացնում էին սովետական երաժշտարվեստը, բնականաբար, մեծապես նպաստեցին Բարիխուտարյանի ստեղծագործական աճին: Հաճախելով նրանց դասերին, կոմպոզիտորը մոտիկից ծանոթացավ նաև նրանց դասավանդման ամենաառաջավոր և պրոֆեսիոնալ մեթոդներին:

Ուղևորությունը լենինգրադ նշանակալի ազգեցություն ունեցավ Բարխուտարյանի մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքի վրա: Նա ոչ միայն վերանայեց իր դասավանդման մեթոդները, ոչ միայն ըմբռնեց կոմպոզիտուրական կադրեր պատրաստող դաստիարակի խնդիրները, այլև շատ բան վերագիտակցեց իր իսկ ստեղծագործական պատկերացումներում:

1929 թվականը կարելի է նրա ստեղծագործության մեջ նոր շրջանի սկիզբ համարել: Նրա ստեղծագործական ենթագիտակցությունը, որով նա զիսավորապես ղեկավարվում էր

մինչ այժմ, սկսեց խստորեն ենթարկվել դիտակցությանը: Ընդլայնվեցին նրա պատկերացումները կոմպոզիցիոն ձևերի, դրանց տոնայնական պլանների մասին: Նրա համար կատարյալ ձևի, տոնայնական հարաբերակցությունների և կոմպոզիտորական մտածողության տրամաբանականության իդեալ դարձավ Բեթհովենը, որի սոնատային ձևի ուսումնասիրմանը նա այնուհետև զգալի ժամանակ հատկացրեց: Մեծ ուշադրությամբ ու խորությամբ է նա թափանցում հայկական ժողովրդական մեղեղիների կառուցվածքային առանձնահատկությունների, լադային էության, հարմոնիկ ինքնատիպության ոլորտները: Ակամա նա տարվեց դիտահետազոտական աշխատանքով, սկսեց զեկուցումներ կարդալ, հոդվածներ գրել, շոշափելով տեսության և կոմպոզիցիայի էական հարցեր: Ճիշտ է, նրա արտահայտած մտքերը միշտ չեն, որ աշքի են զարնում նորությամբ ու թարմությամբ, բայց հաճախ նրան հաջողվում էր անել հետաքրքիր դիտողություններ և զրանցից բխող բավականին ինքնատիպ հետևություններ (այս մասին ավելի մանրամասն կիսումի ստորև):

Բարխուդարյանի ստեղծագործության մեջ սկսեցին երևալ խոշոր ձևի երկեր: Նա գրում է քառամաս սյուիտ դաշնամուրի համար (1932), որն իրենից ներկայացնում է չորս մանրանվագների ոչ մեծ շարք՝ «ինվենցիա», «երգ», «պար», «քայլերգ»: Սյուիտի երաժշտության մեջ կոմպոզիտորը լայնորեն օգտվում է ժողովրդական երաժշտության աղբյուրներից:

Նույն թվականին նա ստեղծում է նվագախմբային սյուիտ, նվիրված Անդրֆեդերացիայի 10-ամյակին: Սյուիտը եռամաս է: Երաժշտությունը հիմնված է կոնկրետ ծրագրի վրա, որով

և պայմանավորված է ստեղծագործության բնույթը և կերպարայնությունը։ Առաջին մասում կոմպոզիտորն աշխատում է հաղորդել նախասովետական Հայաստանի պատկերը, նրա դժվար ու ծանր անցյալը։ Երկրորդ մասը նվիրված է ողբերգական դեպքին՝ Բաքվի 26 կոմիսարների գնդակահարությանը։ Երրորդ մասն արտահայտում է ժողովրդական տնտեսության պատկերը. դժողովում է նոր, վերածնված Հայաստանի երաժշտական կերպարը։

«Անդրֆեդերացիա» սյուիտը կոմպոզիտորի առաջին փորձերից մեկն է սիմֆոնիկ մեծ ձևի ասպարեզում և գուցե դրանից է, որ սյուիտը շունի կոմպոզիցիոն ավարտվածություն և շարադրանքի այն ազատությունը, որը հատուկ է Բարխուդարյանի դաշնամուրային պիեսներին։ Գործիքային երաժշտության ասպարեզում, որտեղ ստեղծել էր հիանալի մանրանըվագներ, Բարխուդարյանը նույնպես ձգտում է խոշոր ձևերի։ Նա գրեց մեկ մասանի ոչ մեծ գործ սոնատային ալեգրոյի ձևով՝ ֆա-դիեզ մինոր «Անդանթեն» (1932 թ.): Հիմքում ընկած են երկու թեմա՝ համարյա միատիպ, չհակադրվող, որոնք ավելի շատ մեղեդային մի կերպարի զարգացումն են հանդիսանում։ Մեղեդային հիմնական բջիջը, որ նվագարկվում է ողջ պիեսի ընթացքում, իրենից ներկայացնում է «Բայաթի քուրդ»-ի մեղեդային բնորոշ կորիզը։ Երաժշտությունը ծավալվում է հանգիստ, անշտապ շարադրանքով։ Միայն մշակման մեջ սեկվենտացին փոքր զարգացումը ընդհանուր, հավասարակշռված, շնչին մի փոքր հուզում է հաղորդում։ Ընդհանրապես գերիշխում է հայեցողական քնարականության անխոռվ տրամադրությունը։ «Անդանթե»-ի, ինչպես

նաև նախկին «Նոկտյուրնի» և մի շարք այլ պիեսների երաժշգության մեջ ներհոսում են թիֆլիսյան ֆոլկլորի ինտոնացիաները, որոնք լավում են մեղեդային յուրօրինակ քայլերի մեջ, ինտոնացիոն բնորոշ «շեշտերում» ընդգծված հարմոնիկ ֆոնով։

1932 թվականը կոմպոզիտորի համար ստեղծագործական տեսակետից արգասարեր եղավ։ Երկու սյուխտ (դաշնա՞ռուրային ու նվագախմբային), «Անդանթե» դաշնամուրի համար՝ բավական հիմնավոր գործ է։ Բայց և այնպես, այդ տարվա ամենաարժեքավոր գործը պետք է համարել Սայաթ-Նովայի 8 երգերի մշակումները։



Ժողովրդական և աշուղական երգերի իր ներդաշնակումներում Բարխուդարյանը մշակել է կոմպոզիցիոն որոշակի սկզբունքներ ու մեթոդներ։ Մեղեդային կերպարը նաև ներկայացնում է շոշափելի, իր ողջ գեղեցկությամբ ու հապույրով։ Երգերի դաշնավորմանն ու նվագակցությանը կոմպոզիտորը վերաբերվում է ծայր աստիճան զգուշությամբ։ Ա՛ հարմոնիան ու լադային յուրահատկությունները, և՛ ոիթմիկան, և՛ նույնիսկ հենքը նրա մոտ բխում են հենց երգի բնույթից, նրա հնչերանգի առանձնահատկություններից։ Դրա համար էլ հնչման տեսակետից այդշափ ինքնատիպ է յուրաքանչյուր մշակումը, դրա համար էլ յուրօրինակ և ճկուն է ոիթմիկան, հնարամիտ է հենքը, Սայաթ-Նովայի երգերի մշակումներում զգալի ակնբախությամբ երևան եկավ աշու-

դական երգերի հատկանիշների՝ թարխուղարյանի խորիմացությունը, դրանց բարդ ոխթմիկայի, լաղային ոլորտների անկայունության ու փոփոխականության, ժողովրդական երգի հնչերանգավորումից զգալիորեն տարբերվող հնչերանգավորման տրագիֆիոն սկզբունքների օրգանական յուրացումը: Միաժամանակ, կոմպոզիտորը հանդես բերեց գեղարվեստական բարձր ճաշակ և ստեղծագործական հնարամտություն, ուժ երգից յուրաքանչյուրի համար գտնելով հատուկ մոտեցում:

Ներդաշնակման հիմնական սկզբունքը նրա համար տվյալ մեղեդու լադային ինքնատիպությունն է: Լադերի փոփոխականություն, լադային օժանդակ հենակետերի շրջազարդում ենք գտնում մենք յուրաքանչյուր մշակման մեջ: Ինտոնացիոն տեսակետից ամենահետաքրքիր մշակումներից մեկը «Ուստի գուքա» երգն է, որի մեջ վառ կերպով է արտահայտված անցումը լադային մի ոլորտից մյուսին: Փոփոխվում է ոչ միայն հարմոնիկ գունավորումն իր սուր հնչող սեղունդներով ու ալտերացիաներով հանդերձ, այլև փոփոխվում է բուն երգի գունավորումը, տրամադրությունը՝ այն դառնում է ավելի հուզական ու լարված:

Յուրօրինակ մշակման է ենթարկվել «Բլբուլի հիդ» երգը: Երկակի լադի, ուրեմն և տոնայնական երկու հենակետերի առկայությունը երգին հաղորդում է բացառիկ ու ինքնատիպ հնչողություն: Բնական VII-ի և տոնիկայի (զուգահեռ կվինտաներ ու-ի և մի-ի վրա) նմանապես ընդգծվող հարաբերակցությունը խորը թախծի ու տրամության տրամադրություն է հաղորդում երգին:

Մեծ ճաշակով և լադային ինքնատիպության ճշմարիտ զգացմամբ են կատարված նաև մյուս մշակումները՝ «Մեխոսկ ունիմ», «Չիս ասում, թե», «Ինչ կոնիմ», «Դուն էն դլխեն», «Յիս քու զիմեթն շիմ գիտի», «Քանի վուր ջան իմ»:

Արժեք նշել բոլոր մշակումներին բնորոշ մի հատկություն և՝ նվազակցության մեջ Բարխուդարյանը հաճախ է դիմում «նմանողական ռեպլիկների»: Ինչոր առանձին, արտահայտիչ մի ինտոնացիա նվազակցության մեջ իր արտահայտությունն է գտնում որպես ինտոնացիոն կամ ոիթմիկ տարբերակման արձագանք: Վոկալ գծի և նվազակցության փոխներթափանցումը ընդհանրապես ձկունություն, ամուր շաղկապահություն է հազորդում երգին: Բարխուդարյանի հիանալի մշակումները ժամանակի քննությունը բռնել են՝ մինչև օրս էլ դրանք համարվում են մեծ աշուղի երգերի ոգին լավագույն ու ճիշտ արտահայտող մշակումներ:

Բարխուդարյանի այդ աշխատանքը բարձր է գնահատում Ա. Շահվերդյանը. «...Սայաթ-Նովայի երգերի մշակումները, որոնք աշքի են ընկնում լավ ճաշակով, լադային շարժման երանգների ճշգրիտ զգացողությամբ», հարազատորեն ընկալված տրամադրությամբ¹, նա համարում է Բարխուդարյանի ստեղծագործության արժեքավոր մասը: Իսկ Ք. Քուշնարյանը գրում է. «Հետազոտողի համար շնորհակալ նյութ կա... Սայաթ-Նովայի երգերի հրատարակված ժողովածու-

¹ Ա. Շահվերդյան, «Հայ երաժշտության պատմության ակնարկներ», Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 266:

² «Հայ մռնողիկ երաժշտության պատմության ու տեսության հարցեր», էջ 5:

Ներում, որոնցից մեկը կազմել է Ս. Բարխուդարյանը...^{2:}
Այս ասուլիթները պատկանում են երաժշտագետների, որոնք
խորապես ուսումնասիրել են հայ երաժշտության հիմքերը,
այդ առումով էլ դրանք խիստ արժեքավոր են ու կարևոր:



Բարխուդարյանի ստեղծագործության հետաքրքիր էջե-
րից մեկը նրա աշխատանքն է թատերական և կինոերա-
ժշտության ասպարեզում: 1933 թ. առաջին անգամ նա
հանձն առավ երաժշտություն գրել Հ. Պարոնյանի «Մեծա-
պատիվ մուրացկաններ» պիեսի բեմադրության համար:
Բեմադրությունը նախապատրաստում էր ուժիսյոր Վ. Աճեմ-
յանը կենինականի դրամատիկ թատրոնում:

Ժանրի նորությունը և օրիգինալությունը հրապուրեցին
Բարխուդարյանին: Նա գլխովին նվիրվեց աշխատանքին,
ուսումնասիրելով պիեսում ծավալվող գործողությունների
ժամանակաշրջանն ու միջավայրը, բարքերն ու կենցաղը,
սկսեց ծանոթանալ ժամանակի ֆոլկլորին ու երաժշտությա-
նը: Ստեղծվեց վառ, կենսախինդ, պիեսի ոգուն ու տրամա-
դրությանը համապատասխանող երաժշտություն: Քննադատ-
ները բարձր գնահատեցին Պարոնյանի պիեսի համար Բար-
խուդարյանի գրած երաժշտությունը, հատկապես նշելով
արևելյան բնորոշ կոլորիտը: Պիեսը հաշողությամբ բեմա-
դրվում էր կենինականի թատրոնում, ապա միննույն երա-
ժշտությամբ բեմադրվեց նաև Երևանում՝ Սունդուկյանի
անվան դրամատիկ թատրոնում (ուժիսյոր՝ Վ. Աճեմյան),

Թրիլիսիում՝ պատանի հանդիսատեսի թատրոնում (ռեժիսոր՝ Վ. Վարձիկովյան), հետագայում Թրիլիսիի դրամատիկ թատրոնում (ռեժիսոր՝ Ա. Աբարյան): Բարխուդարյանը, ոգեգորգած հաջողությամբ, շարունակում էր երաժշտություն գրել թատրոնի համար:

1935 թ. նա երաժշտություն է գրում «Շահնամե» պիեսի համար, որը բեմադրվեց Լենինականի թատրոնում (ռեժիսոր՝ Վ. Աճեմյան): Նույն թվականին Թրիլիսիի ՊՀՄ-ում բեմադրվեց Մ. Արմենի «Սկառտ» պիեսը (ռեժիսոր՝ Ա. Աբարյան), գարձյալ Բարխուդարյանի երաժշտությամբ: 1936 թ. Բաքվի թատրոնում Ս. Թարյանը բեմադրում է Շիրվանզադեի «Նամուսը», որի համար երաժշտություն է գրում Ս. Բարխուդարյանը: Հետագայում նրա երաժշտությունը հրնչում է Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» (Երևան, Սունդուկյանի անվան թատրոն, ռեժ. Վ. Աճեմյան, 1940), Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» (Թրիլիսիի ՊՀԹ, ռեժ. Վ. Վարձիկովյան, 1941), Սունդուկյանի «Խաթթաբալա» (Թրիլիսի, դրամատիկ թատրոն, ռեժ. Լ. Ֆիդայյան, 1944), Պապայանների «Մեծ հարսանիք» (Թրիլիսի, դրամատիկ թատրոն, ռեժ. Յ. Բժիկյան, 1946), «Հարազատ մարդիկ» (Թրիլիսի, դրամատիկ թատրոն, ռեժ. Հ. Ումիկյան, 1947) պիեսների բեմադրությունների ժամանակ:

Այսպես, համարյա 25 տարի շարունակ Անդրկովկասի երեք մայրաքաղաքների թատրոնները նոր բեմադրությունների երաժշտությունը վստահում էին Բարխուդարյանին: Սա, անկասկած, վկայում է, որ կոմպոզիտորը բավականաշատ տիրապետել էր թատերական երաժշտության ժանրի յուրա-

Հատկություններին: Բեմադրությունների թատերախոսական-ներում սովորաբար քննադատությունը որոշակի տեղ էր հատկացնում Բարիսուգարյանի երաժշտությանը, նշում պրո-ֆեսիոնալիզմն ու մեղեղայնությունը, հեղինակի պիեսների ոգու, բնույթի մեջ թափանցելու, համապատասխան կոլո-րիտ, արտահայտիչ երաժշտական ֆոն ստեղծելու կարողու-թյունը, բեմի օրենքների նրա իմացությունը և այլն:

Թատերական երաժշտությունից կինոերաժշտությանն անցնելը մի քայլ է: Կատարելով մեկը, կոմպոզիտորը կա-տարեց և մյուսը: Նրա արտահայտիչ երաժշտությունը կազ-մեց «Կարո» կինոնկարի լավագույն էջերից մեկը: Մինչ այժմ ապրում է Կարոյի երգը, որը, շնորհիվ վառ, արտահայտիչ մեղեղու և Արմենակ Տեր-Արրահամյանի ոգեշունչ կատար-ման, լայն տարածում գտավ:

Բարիսուգարյանի երաժշտությամբ էկրան բարձրացավ նաև «Քաջ Նազար» կինոնկարը (ռեժ. Ա. Տեր-Մարտիրոս-յան): Զափազանց հետաքրքիր էր նրա երաժշտությունը մուկ-տիպլիկացիոն՝ «Շունն ու կատուն» և «Տերտերն ու այծը» կինոնկարների համար: Մանրանվագի, նուրբ վրձնի այդ վարպետի շնորհքը շատ էր համապատասխան մուլտիպլի-կատորների մանրակրկիտ աշխատանքին, այդ պատճառով էլ նրա երաժշտությունն այնքան համահնչյուն է այդ մանկա-կան կինոնկարների կերպարներին ու բնույթին:



Բնդհանրապես Բարիսուղարյանի ստեղծագործական անհատականությանը չափազանց մոտ է մանկական երաժշտության բնագավառը, որին նա քիչ ժամանակ ու ձիրք չի հատկացրել: Երեխաների համար նա երաժշտություն է գրել ստեղծագործական ողջ գործունեության ընթացքում, ներկայումս նույնպես շատ ժամանակ է հատկացնում դրան: Անզընահատելի է նրա ստեղծագործական ներդրումը հայկական երաժշտության այդ ոչ հարուատ բնագավառում: Գիտակցելով խնդրի ողջ կարևորությունը, որ կանգնած է հայ կոմպոզիտորների առջև՝ մանուկների համար ազգային երաժշտություն ստեղծելու գործում, Բարիսուղարյանը հանդես է բերում ամենայն լրջություն ու պատասխանատվություն: Նա ստեղծել է բնույթով ու տեսակով բազմազան մեծ քանակությամբ մանկական հիանալի պիեսներ: Փորձառու մանկավարժի նրբազգացությամբ, նա միշտ նկատի է ունեցել ուսումնական պրոցեսի յուրահատկությունները և աշխատել երաժշտական դպրոցներին տալ ազգային լիարժեք նվազացանկ: Իր մանկական պիեսներում կոմպոզիտորը փորձում է լուծել մի շարք կարեռ խնդիրներ՝ մի կողմից զարդացնել տեխնիկական այս կամ այն կարգի հմտություններ, մյուս կողմից՝ դաստիարակել երաժշտական ճաշակ, գլխավորը՝ երեխաների մեջ սեր արթնացնել ազգային երաժշտության, հայկական հարազատ մեղեղիների նկատմամբ: Դրա համար էլ ինքնուրույն ստեղծագործություններին զուգահեռ, նա հաճախ օգտագործում է ժողովրդական հարա-

զատ եղանակները, դնելով դրանք մանկական փոքրիկ պիեսների հիմքում:

Մանուկների համար գրած իր բազմաթիվ ստեղծագործությունները Բարխուդարյանը միավորել է մի քանի ժողովածուներում, որոնցից յուրաքանչյուրը տարիքային որոշակի նշանակություն ունի: Այսպես, բազմիցս վերահրատարակվել են փոքր տարիքի երեխաների, պատանեկության համար նախատեսված ժողովածուները, մանկական ալբոմները և այլն:

Բարխուդարյանի ստեղծագործական շնորհի առավել բնորոշ գծերը արտահայտվել են նրա լավագույն մանկական պիեսներում: Մանրանվագի նրբաճաշակ վարպետ, մեղեղալին վառ անհատականության տեր և ազգային երաժշտարվեստի հմուտ գիտակ կոմպոզիտորն՝ այդ պիեսներում բաց շինթողել իր ոճի որևիցե հատկանիշը: Երեխաների հետ նախոսում է մատշելի, հակիրճ, ինքնատիպ ու բանաստեղծական լեզվով: Մի յուրահատկություն նույնպես աշքի է զարնում Բարխուդարյանի պիեսներում՝ դրանց մեջ, ինչպես նաև մեծահասակներին հասցեազրված այլ գործերում, որոշակի դրսերվում են վրացական ինտոնացիաներ: Անկասկած, դա իր օրինաշափությունն ունի, և Բարխուդարյանի ժողովածուներում հետաքրքիր ու հարազատ շատ բան կտննեն և Հայաստանի, և Վրաստանի երաժշտական դպրոցների աշակերտները:

Ժողովածուներից մեկը՝ «Մանկական ալբոմը»¹, ամփո-

¹ Վերանայված երկրորդ հրատարակություն, Թրիլիսի, 1964:

փում է տարբեր տարիքների համար ՀՕ պիես, որոնք իրենցից ներկայացնում են մանկական առօրյայի կենդանի պատկերներ, ժանրային կտորներ, փոքրիկ տեսարաններ՝ «Մանկապարտեզում», «Ռուբիկը բողոքում է», «Շատախոս», «Արշավ», «Չարաճճին», «Ծննդյան օրը», «Դպրոցում» և այլն։ Պարզ, արտահայտիչ, կոնկրետ պատկերավորմամբ երաժշտությունը ժողովածուների պիեսները մատչելի են դարձնում մանկան երեակայությանը։ Մի քանի փոքրիկ պիեսների հիմքում հեղինակը դրել է ժողովրդական հայտնի մեղեդիներ, այսպիսով մանուկների լուղությունն ընտելացնելով ժողովրդական երաժշտության ինտոնացիաներին։

Այս ժողովածուի պիեսներում դեռ չեն դրվում տեխնիկական խնդիրներ, թեև պիեսները դասավորված են աստիճանական բարդացման կարգով։ Դրանք երեան են գալիս մյուս ժողովածուում, որ նախատեսված է բարձր դասարանների համար։ Այդ ժողովածուի² պիեսները բավականաշապի բազմազան են հենքի ու ոիթմիկայի տեսակետից, ավելի հարստ են կերպարներով, որի համար էլ ազգային տարրը ավելի վառ է զրակորվում։ Ժողովածուում կան ժանրային հիմնալի պատկերներ, բանաստեղծական դրվագներ, պարային արտահայտիչ կտորներ։ «Դյուլնարայի պարը», «Շուշանի պարը» հիմնված են ժողովրդական պարերի ոիթմերի ու ինտոնացիաների վրա։ Խանաստեղծական հմայքով լի են «Հովվիվը նվազում է», «Հեքիաթ», «Շուշանի օրորոցայինը» և այլ պիեսներ։

² Հրատարակվել է երեք անգամ, Հայպետհրատ, 1948, 1955, 1962։

Մանկական պիեսների մյուս ժողովածուն (1957 թ. Հրատարակություն) նույնպես մի շաբթ հետաքրքիր ու արտահայտիչ պիեսներ է ամփոփում։ Ամենավառ տպավորությունը թողնում են «Պարը» և «Նարինեի պարը»։ Քնարական նուրբ տոներով գծագրվում է մանկահասակ աղջկա քնքուշ, կանացի կերպարը։ Գեղեցիկ, թեթևասահ մեղեղին հիմնված է հայկական ժողովրդական երաժշտության լադային յուրահատկությունների վրա։

Բարխուղարյանը որոշակի նպատակ է հետապնդում «Թեթև և միջին բարդության 26 մանրանվագ-պիեսներ» ժողովածուում¹, որի բոլոր պիեսները ճաշակով ընտրված ժողովրդական երգերի պարզեցրած փոխադրություններ են։ Հատկապիս արժեքավոր է, որ ժողովրդական այդ մեղեղիների ընտրությունը կատարված է ազգային երաժշտական փոլկորի լավագույն նմուշներից։ Գլխավորապես, ժողովածու են մըտել երգեր Կոմիտասի ազգագրական ժողովածուից, ԿարաՄուրգայի որոշ մշակումներ և այլն։ Այսպիսով, սովորողները հնարավորություն են ստանում յուրացնել ժողովրդական երաժշտության առավել բնորոշ և ոճական տեսակետից ավելի անաղարտ նմուշները, նրա ինտոնացիոն ինքնատիպ կողմը, լադային հարուստ առանձնահատկությունները։ Այդ եղանակների վերադաշնավորման մեջ Բարխուղարյանը զբրուկորել է հայկական երգի լադային ինքնատիպության խորն իմացություն և հմտություն, ովահպանել է ոճի մաքրությունն ու դրանց բնական հնչման ազգային ինքնատիպությունը։

¹ Հայպետհրատ, 1953 և 1962։

Այս ամենն, անկասկած, ժողովածուն դարձնում են երաժշշտական դպրոցներում սովորողների համար գեղարվեստորեն լիարժեք ձեռնարկ:

Երեխաների համար Բարիսուդարյանի ստեղծած երաժշշտությունը հիանալի երաժշտի արժեքավոր ավանդն է հայկական մանկական երաժշտության գրադարանում։ Բացի այդ, նա մի մեծ աշխատանք ունի երեխաների համար՝ «Քեռի քուշին» մանկական օպերան, որի մասին խոսք կլինի ստորև։



Իր ստեղծագործության նկատելի մասը Բարիսուդարյանը հատկացրել է վոկալ երաժշտությանը։ Ժողովրդական երգերի և Սայաթ-Նովայի երգերի հիանալի մշակումներից զատ, նա ստեղծել է ձայնի և դաշնամուրի համար մի շարք ինքնուրույն գործեր։ Երեխանական թվականներին են գրված «Նոր օրոր» (խոսք՝ Հ. Շիրազի), «Դու մի հանդի սիրուն կակաչ», «Հոյ նարե», «Օրոր» (խոսք՝ Գ. Սարյանի) ոռմանսները, 1947-ին՝ երեք երգ՝ «Հայրենի տուն» (խոսք՝ Ն. Զարյանի), «Հիշում եմ» (խոսք՝ Պահարեի) և «Փիոներական»։ Վոկալ ինքնուրույն ստեղծագործության բնագավառում նրա վերջին աշխատանքը վոկալ շարքն է (1955—56), Ավ. Խսահակյանի խոսքերով։ Շարքը կազմված է հինգ ոռմանսից՝ «Ախ, ալ վարդի», «Գետակի վրա», «Աղբյուրի մեջ», «Հոգի կուտամ», «Լուս գիշերին»։ Մեծ ճաշակով են ընտրված Խսահակյանի բանաստեղծությունները։ Բայց միշտ չէ, որ կոմ-

պոզիտորին հաջողվել է մնալ բանաստեղծի քնարական խոսքի իսկական բարձրության մակարդակին: Իսահակյանի քնարերգությանը հատուկ է փիլիսոփայական մտորման խորությունը, լայն ընդհանրացումը: Այնինչ երաժշտության մեջ բանաստեղծական այդ մասշտաբայնությունը մտցված է սահմանափակ, փոքր-ինչ նեղ մտերմիկ քնարերգության շրջանակները: Վերցնենք թեկուզ առաջին ոսմանսը: Բանաստեղծությունը վիթխարի ուժով արտահայտում է անցած ջահելության, անցնող կյանքի ու սիրո տիխրությունը, անվեռադարձ անցածի համար թախիծը: Մինչդեռ երաժշտությունը դուրս չի գալիս քնարական-հուզական զգացման սահմաններից: Այնքան էլ ճիշտ չէ գտնված նվազակցության բնույթը՝ փոքր-ինչ «շարժուն» և մակերեսային-զգացողական, այն տանում է կերպարների մեկ ուրիշ՝ ծրագրային կոնկրետ աշխարհ: Շարքի մյուս ոռմանսներում մեղեղային զարգացման սկզբունքն ավելի մոտ է երգայինին, վոկալ գծի ոփթմական կառուցվածքը շափականց սիմետրիկ է, քառակուսի, որն առավել բնութագրական է երգին, քան ոռմանսին: Բավարար հետաքրքրություն չի ներկայացնում նաև ինտոնացիոն ոլորտը, ուր չկա կոմպոզիտորի գործիքային շատ մանրանքվագներին հատուկ թարմությունն ու ինքնատիպությունը: Գործիքային երաժշտության ասպարեզում, ինչ խոսք, կոմպոզիտորը որոշակիորեն բնական, վառ ու համոզիչ է մտածում:



Երեսնական թվականների երկրորդ կեսը հայ երաժշտության մեջ նշանավորվեց ազգային բալետի ծննդյամբ: Բալետի, որպես բեմական-երաժշտական ավարտուն ստեղծագործության երևան գալը նախապատրաստված էր «Անուշ», «Ալմաստ», «Լուսաբացին» օպերաների պարային ինքնուրույն տեսարաններով, երգի-պարի անսամբլների ժողովը դական թատերականացված պարերով և սիմֆոնիկ ու կամերային ստեղծագործություններով լայնորեն օգտագործվող պարային բազմազան ձևերով:

Առաջին իսկ քայլերից հայկական բալետի զարգացումը գնաց ժողովրդական-ազգային պարային ու երաժշտարվեստի, դասական բալետի ավանդույթների և սովետական բալետային արվեստի նվաճումների զուգորդման ճանապարհով: Միաժամանակ, ժանրային առումով, հայկական բալետում հենց սկզբից երկու գիծ կանխորոշվեց. մեկը՝ քնարական-դրամատիկական, հեքիաթային-կենցաղային, մյուսը՝ ժամանակակից իրականությունն արտացոլող: Բալետային ժանրի առաջին գծի զարգացման գործում նշանակալի դեր խաղաց Բարխուդարյանն իր «Նարինե» բալետով:

Բալետ ստեղծելու միտքը վաղուց էր հուզում կոմպոզիտորին հասկանալի պատճառներով՝ պարայնությունն է նրա երաժշտության հիմնաքարը, պարային ոիթմերով, մեղեղային պատկերի խորեոգրաֆիկ ձևունությամբ են ակնառու նրա երաժշտության լավագույն էջերը: Պարի հոգեբանական մեկնարանության բնագավառում իր որոնումները նա ցանկա-

ցավ փոխադրել բեմական-երաժշտական ծավալուն ձևի բնագավառ, ուր բանաստեղծական բովանդակության հիմքի վրա կարելի էր ցուցադրել Հայկական ժողովրդական պարերի ողջ հարստությունը: Իր ցանկությունը կոմպոզիտորը կարողացավ իրականացնել 1936 թվականին, երբ սկսեց աշխատել «Նարինե» բալետի վրա: Մոտենում էր Հայ գրականության ու արվեստի առաջին տասնօրյակը Մոսկվայում և անհրաժեշտ էր ազգային օպերայի հետ մեկտեղ նաև ազգային բալետ ներկայացնել: Հայաստանի լուսժողկոմատը բալետ գրելու առաջարկով դիմեց մի շարք Հայ կոմպոզիտորների: Բարիստգարյանը կանգ առավ Սրբու՞նի Լիսիցյանի լիբրետոյի վրա, ուր լայնորեն ներկայացված են Հայ ժողովրդի կենցաղն ու գունեղ ծեսերը՝ վարդավառը (1-ին գործողություն), նշանդրեքը (3-րդ գործողություն), բարեկենդանը (4-րդ գործողություն) և այլն: Այդ ֆոնի վրա ծավալվում է սոցիալական անհավասարության, դաժան օրենքների և աղաթի թեման, որը և կանգնում է սնանկացած կալվածատիրոջ խորթաղջիկ Նարինեի և ժողովրդի սիրելի աշուող Կարոյի սիրո ճանապարհին:

Համառոտակի՝ բալետի բովանդակության մասին: Գործողությունը կատարվում է նախահեղափոխական Հայաստանում, Լոռիում, 19-րդ դարի սկզբներին¹:

Արեւոտ օր է, վարդավառի տոնը: Բացատում, աղբյուրի մոտ, Հավաքված գյուղի տղաներն ու աղջիկները խաղում են,

¹ Լիբրետոյի վերապատմումը ըստ Գ. Տիգրանովի «Հայկական երաժշտական թատրոնը» աշխատության 2-րդ հատորի «Հավելվածի», Հայպետհրատ, 1960, էջ 285:

երգում ու պարում։ Ծնողներից թաքուն այստեղ է եկել նաև դեղեցկուհի Նարինեն։ Այս որբուկին որդեգրել էր մելիք Նուրիշանը։ Վճռելով կարգի գցել իր գործերը, մելիքը որոշել է Նարինեին կնության տալ հարուստ փեսացուի։ Խսկ աղջիկը սիրում է աշուղ Կարոյին։ Կարոն էլ է այստեղ։ Նրա երգն ու սազի նվազը դուր են գալիս բոլորին։ Նարինեն և Կարոն մտնում են շուրջպարի մեջ։ Երեկոն իշնում է բացատի վրա։ Մնում է միայն սիրահար զույգը։

Հանկարծ հեռվից երեսում է մելիք Նուրիշանը տնեցիների ու ծառաների ուղեկցությամբ։ Տեսնելով նրանց, զայրացած մելիքը հրամայում է վոնդել Կարոյին, և Նարինեին ասում, որ այլևս չխոսի ու շտեսնի աշուղին։ Քիչ անց, հեռվից կրակոց է լսվում, ապա երեսում են հարուստ մելիք Արսենի որդի Արտավազդն ու Կարոն։ Արտավազդը Նուրիշանին պատմում է, թե ինչպես որսի ժամանակ իր հետ դժբախտ գեպք պատահեց ու թե ինչպես Կարոն փրկեց իր կյանքը։ Նուրիշանը հյուրի համար Նարինեին պարել է հրամայում։ Արտավազդն ապշած է աղջկա գեղեցկությամբ ու հեղանազությամբ։ Տեսնելով նրա հիացմունքը, Նուրիշանը վճռում է Նարինեին կնության տալ Արտավազդին։ Վերջինս ընդունում է Նուրիշանի առաջարկությունը և հյուր գնում նրա տուն։ Հուսահատ Կարոն ընկերներին է պատմում իր դարդը։ Մի քանի օր անց Արտավազդը Նուրիշանի մոտ խնամախոս է ուղարկում՝ խնդրելու Նարինեի ձեռքը։ Նարինեն աղաշում է խորթ հորը շամուսնացնել իրեն չսիրած մարդու հետ, բայց իգուր։

- Նուրիշանը հյուրեր է կանչում, նրանց հայտնելու Նարի-

նեի ու Արտավազդի առաջիկա պսակի լուրը: Բոլորը խմում
են հարսի ու փեսայի կենացը:

Նուրիջանի տանը տոնախմբություն է Նարինեի հարսա-
նիքի առթիվ: Սկսվում են երգերն ու պարերը: Միայն հարս-
նացուն է անհաղորդ այդ ամենին: Կարոյից զրկված նա-
դառն արցունք է թափում իր ճակատագրի վրա: Հանկարծ,
տոնախմբության թեժ պահին, Նուրիջանի տունն է մտնում
Կարոն: Նա հանդիմանում է Արտավազդին, որը խախտել է
եղբայրության օրենքը: Նուրիջանի ծառաները բռնում ու կա-
պուտում են Կարոյին:

Կարոյի ընկերներին հաջողվում է աննկատելիորեն մրտ-
նել Նուրիջանի տունը և ազատել Կարոյին: Ընկերոջն օգնելու
վճռականությամբ լի, նրանք կազմում են Նարինեին փախց-
նելու ծրագիր:

Բարեկենդան է: Գյուղի կենտրոնում հավաքվել են բոլո-
րը՝ մեծ ու փոքր, ահել ու ջահել: Վերջապես էշին նստած
երեսում է «Խանը»՝ տոնի կազմակերպիչն ու գլխավորը: Միա-
ժամանակ հեռվից երեսում է հարսանիքի թափորը: Հրապա-
րակ մտնելուն պես «Խանը» կանգնեցնում է թափորը և հար-
սին՝ Նարինեին, առաջարկում տեղ գրավել իր կողքին, իսկ
փեսայի հորը՝ մելիք Արսենին, պարել ժողովրդի համար:
Պարից հետո «Խանը» Արսենից պահանջում է հարկ վճարել,
որ թույլ տա հարսանքավորն անցնի: Արսենը տալիս է, բայց
«Խանն» էլի է պահանջում: Արսենը մինչև վերջին կոպեկը
տալիս է, բայց «Խանը» դարձյալ դժգոհ է: Նա հրամայում է
կապկապել հարսանքավոր բոլոր տղամարդկանց: Արտա-
վազդն ըմբռստանում է, բայց Արսենը հանգստացնում է,

ասելով, որ այս բոլորը կատակ է, բարեկենդանի օրենք: Եթե
բոլոր տղամարդիկ կապկպված են լինում, «Խանը» հանում է
իր դիմակը և բոլորը ճանաշում են աշուղ Կարոյին: Կարոն
և Նարինեն վազում են ձիերի կողմը, որ նրանց համար պատ-
րաստ պահում են ընկերները: Արսենի, Արտավազդի և Նու-
րիջանի ղայրացած բղավոցներն ու ժողովրդի ուրախության
աղմուկը ետևում թողած, Կարոն ու Նարինեն անհետա-
նում են:

Սրբուհի Լիսիցյանի լիբրետոն ժանրային, կենցաղային
տարրերի իր առատությամբ, բնորոշ կոլորիտային գործող
անձանցով հիմք դարձավ վառ, գունեղ երաժշտության հա-
մար, որը լի է արտահայտիչ մեղեղիներով և գլխավոր՝ պա-
րային բազմազան դրվագներով: Բալետի երաժշտությունը
ներծծված է հայկական երաժշտության ինտոնացիաներով,
լաղային-հարմոնիկ և ոիթմական առանձնահատկություննե-
րով: Բալետում վառ կերպով ընդգծված է ժողովրդական
կոլորիտը: Բացի այդ, կոմպոզիտորը լայնորեն օգտվել է
ֆոլկլորային աղբյուրներից: Օգտագործված մեղեղիները
տուանձին դեպքերում օրգանապես ներհյուսվել են երաժշտա-
կան ընդհանուր հյուսվածքին, ճշմարտացիորեն են արտա-
հայտել տվյալ իրավիճակն ու բնութագրությունը: Այսպես,
աշուղ Կարոյի կերպարի հաջողությանը շատ են նպաստում
«Քյոռ-օղլի» հանրահայտ երգի ինտոնացիաների ու ոիթմիկա-
ցի օգտագործումը, ինչպես նաև քաղաքային քնարական
«Հայոց աղջիկներ» երգի մեղեղու օգտագործումը, եթե ան-
հրաժեշտ է արտահայտել սիրավառ Կարոյի կարոտի ուժը:

Բայց միշտ չէ, որ տեղին է ժողովրդական այս կամ այ-

մեղեղու օգտագործումը: Այսպես, անհասկանալի է, թե ինչու մելիք Արսենի և Արտավազդի մուտքը ուղեկցվում է «Ալագյազ» երգի վեհ, քնարական, ողեշունչ մեղեղիով (2-րդ գործողություն): Կամ՝ մեկ ուրիշ զրվագ՝ նուրիջանի և նրան ուղեկցողների մուտքը (1-ին գործողություն), չգիտես ինչու, բնորոշվել է սիրային, քնարական՝ «Իմ շինարի յարը» երգի ինտոնացիաներով: Այս սահուն մեղեղին հնչում է քայլերգային ոիթմի ֆոնի վրա, կորցնելով իր հմայքն ու հրապուրը: Իսկ որպես քայլերգ այն համոզիչ տպավորություն չի թողնում: Ֆուկլորային նմուշների օգտագործումը նման գեպքերում ձևական բնույթ է կրում:

Երաժշտական շատ համարներ զրված են ժողովրդական ոգով, բնորոշ ինտոնացիաներով ու ոիթմերի օգտագործմամբ: Այս տեսակետից հատկանշական է 1-ին գործողության նախանվագի երաժշտությունը, զրված կոխի ավանդական ոգով: Կոմպոզիտորն աշխատում է վերաբրտադրել զուռնայի զիլ-տոնական հնչողությունը, ուղեկցելով այն դուրսի հատու ոիթմով:

Այդպիսով, նրան հաջողվում է ստեղծել համապատասխան բարձր տրամադրություն, ժողովրդական տոնախմբությունների ոգին (1-ին գործողությունն սկսվում է վարդավառի տոնով):

Շատ տեսարաններում (մասսայական և մենակատար) կոմպոզիտորին հաջողվում է վերաբրտադրել ժանրային հյութեղ կոլորիտ, ժողովրդական նիստուկացի վառ պատկեր: Այդպիսիք են չորան Համոյի քիչ կոպտավուն պարը, տղամարդկանց պարերն առաջին գործողությունում, խնամու-

կոմիզմով լի և փոքր-ինչ ծանրաշարժ պարը (1-ին գործ.), հարսանեկան թափորը (4-րդ գործ.), որի զուսպ ու արտահայտիչ երաժշտությունը պարունակում է ժողովրդական-գործիքային կատարմանը շատ բնորոշ ինտոնացիաներ ու ֆորչլագներ:

Ժանրային կոլորիտով են ներծծված նաև աղջիկների թեթևասահ պարերը (1-ին, 3-րդ գործ.), նորիջանի և Արսենի ծերունական, ծանրումիծ պարը (2-րդ գործ.), հարսանքավորների, փառհեանների պարերը (4-րդ գործ) և այլն:

Կոմպոզիտորին հաջողվել է ստեղծել գլխավոր հեռուսների երաժշտական տիպական բնութագրեր: Բալետի կենտրոնում Նարինեի քնքուշ ու հմայիչ կերպարն է՝ բնութագոված քնարական արտահայտիչ թեմայով, որը և դառնում է նրա լեյտմոտիվը:

Երեան գալով Նարինեի յուրաքանչյուր մուտքի ժամանակ, թեման արտահայտում է հերոսուհու հոգեկան վիճակը, նրա զգացմունքի զանազան դրսեւորումները: Մերթ այն հնչում է պայման քնարական, մերթ տիսոր ու վճար (1-ին գործ., Նարինեի և Կարոյի տես.), մերթ հուսալի (նույն տեղում): Բայց և այնպես այդ լեյտմետան սիմֆոնիկ իսկական զարդացում չի ստանում: Փոփոխվում են երանգները, բայց կերպարային վերիմաստավորում տեղի չի ունենում, որը, անկասկած, կնպաստեր կերպարի հարստացմանը:

Առավել արտահայտիչ համարներից մեկը Նարինեի պարն է (1-ին գործ.), որը պատկերում է ամոթխած, համեստ ու անբիծ աղջկա կերպարը՝ հայ գեղջկուհու կատարյալ նկա-

Պագիրը: Պարի մեղեդու ինտոնացիոն քայլերը սահուն են, դուսպ ու հեղաճկուն:

Կարոյի երաժշտական բնութագրման մեջ կոմպոզիտորը լայնորեն օգտագործում է հերոսական երգերի ինտոնացիաներ: Արտավազդի երաժշտական բնութագիրն աշքի է ընկնում վառ գծերով: Նրա պարերի եռանդուս ոիթմերում, կտրիճ ու սրբնթաց լեզգինկայում ծնվում է ինքնահավան հարուստ փեսացուի կերպարը: Ինքնատիպ է նազելիի պարը, որը մյուսներից տարբերվում է ճկուն ոիթմիկայով (⁹/₈), մեղեդային զարգացման անընդմեջ շարժումով, լադային գունեղ երանգագործմամբ:

Բալետի երաժշտությունն ամբողջությամբ բանաստեղծական մեղմ տոներ ունի, կոմպոզիտորին հատուկ քնարականությունն այստեղ նույնպես գերիշխող է: Գրավիչ է երաժշտության հանդարտ, չափավոր տեմպը, հմայքը: Բալետում կան նաև դրամատիկ իրավիճակներ, որոնք Բարխուդարյանն աշխատել է արտահայտել լարված-դրամատիկ երաժշտությամբ, օգտագործելով հակադրությունների, գործիքային ոեշիտատիվների, մոտիվային և հարմոնիկ զարգացման հնարներ: Այդպիսիք են երկրորդ գործողության ավարտը, երբ հուսահատ նարինեն խնդրում է Հորը՝ շամուսնացնել իրեն, նարինեի հրաժեշտի պարը Յ-րդ գործողությունում, փախցնելու տեսարանը և այլն: Բայց այս տեսարանները նկատելիորեն զիջում են քնարական ու կենցաղային տեսարանների արտահայտչականությանը և պատկերավորությանը:

Բալետի գործիքավորումը կատարված է Բարխուդարյանական մեղմ, ակվարելային եղանակով: Տեղ-տեղ ժողովր-

դական գործիքների նմանեցումներ կան (1-ին գործ. նախա-
նվազում՝ զուռնա, 4-րդ գործ. հարսանեկան թափորում՝ քյա-
մանշա և այլն):

«Նարինե» բալետը զերծ չէ էական թերություններից,
որոնք արտահայտվում են գրական սցենարի հատվածայնու-
թյունից բխող դրամատուրգիական ձևի որոշ անկայունու-
թյան, երաժշտական թեմաների սիմֆոնիկ խսկական դար-
դացման բացակայության, պարային մի շարք համարների
միօրինակության մեջ և այլն:

Բացի այդ, աշքի է զարնում նաև «Նարինեի» երաժշտու-
թյան որոշ առումով իլլուստրատիվ բնույթը: Առաջադրված
խնդրին հակառակ, կոմպոզիտորին չի հաջողվել տալ հերոս-
ների հոգեբանական խոր բնութագրումներ, թեև դրանցից
շատերը գծագրված են բավական դիպուկ գծերով (խնամա-
խոսի, Արտավազդի, դիմակավորների, հենց Նարինեի ու Կա-
ռոյի կերպարները):

Բարխուդարյանը պարային երաժշտության մեջ պատ-
կերավոր մտածողություն ունի, բայց նրան ավելի մոտ է
կենցաղային պարը, քան թատերական-խորեոգրաֆիկ աս-
պտաբեզը, և դա ցայտուն արտահայտություն է գտել բալետի
երաժշտության մեջ:

Բայց և այնպիս անհրաժեշտ է շմոռանալ, որ երբ Բար-
խուդարյանն ստեղծում է իր «Նարինե» բալետը, ոչ միայն
անձնական փորձ, այլև հայկական երաժշտության մեջ ժան-
րային նախատիպ էլ շուներ: «Նարինեն» մեկն է հայկական
առաջին բալետներից, և բալետային դրամատուրգիայի խըն-
դիրները այդ ժանրում դեռ չեին մշակված: Ազգային բալե-

տի սկզբնավորման այդ վաղ շրջանում համարյա անխուսափելի էին նշված թերությունները: Այսուհանդերձ, «Նարինե» բալետը հետաքրքիր երևույթ է հայկական երաժշտության մեջ և միայն ափսոսալ է պետք, որ մինչև այժմ իրականացված չէ բալետի բեմադրությունը: 1938-ին նախատեսված բեմադրությունը շիրագործվեց: Իսկ դա, անկասկած, հնարավորություն չի տալիս օրյեկտիվորեն դատել ստեղծագործության մասին ամբողջապես, նրա իսկական արժանիքների և թերությունների մասին: 1939 թ. բալետի առանձին համարներից կոմպոզիտորը կազմեց բալետային երկու սյուիտ, հետագայում ավելացրեց երրորդը: Այդ սյուիտներում ամփոփվեցին բալետի համարյա բոլոր համարները: Դրանք հաճախակի հնչում են սիմֆոնիկ համերգներում և ռադիոյով: Բայց բալետը սպասում է իր բեմական մարմնավորմանը, որի համար, ըստ երևույթին, խմբագրական որոշակի աշխատանք պիտի կատարել:



«Նարինե» բալետի հակատագիրը կոմպոզիտորի ստեղծագործական ավյունը չկասեցրեց: Եթ 1945 թ. նրան առաջարկեցին երաժշտական կոմեդիայի թատրոնի համար մանկական օպերա գրել, նա պատրաստակամությամբ գործի կավագ: Նրան հրապուրեց երեխաների համար ուրախ, գրավիլ երաժշտություն ստեղծելու միտքը:

Նրան առաջարկվեց թելերյանի «Քեռի քուշին» լիբրետոն ըստ Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» հեքիաթի: Թելերյանը մշակել էր հեքիաթը, զգալիորեն ընդլայնել գործո-

կության շրջանակները, նոր գործող անձիք մտցրել՝ ընտանիք թուուններ և կենդանիներ:

Ընդհանուր գծերով սա է մանկական օպերայի բովանդակությունը:

Առաջին գործողությունը կատարվում է բակում: Քեռի Քուչին հսկում է ընտանի կենդանիներին՝ պահպանելով նըրանց գայլի և աղվեսի հարձակումներից: Մի անգամ, քաշը ըլլշուի ժամանակ, գառան մորթի հագած գայլի վրայից ընկընում է մորթին և կենդանիները ճանաշում են նրան: Երախտապարտ կենդանիներն այդ մորթին շնորհակալությամբ հանձնում են քեռի քուչին:

Երկրորդ գործողությունը պատկերում է արևելյան աղմբկոտ շուկան: Գաղաններն ու կենդանիները աշխուզժ առևտուր են անում, գայլն ու աղվեսը անկարգություններ են անում, իսկ շունը փնտրում է զղակ կարողին: Եվ ահա վերջապես նա կատվի արհեստանոցում է (երրորդ գործողություն) և փափախ է պատվիրում:

Այս գործողության երկրորդ պատկերը նույն արհեստանոցում է կատարվում: Շունն ապարդյուն գալիս-գնում է իր փափախի ետևից, իսկ գառան մորթուց բաճկոնը հագին կատուն աղմուկ-աղաղակ է բարձրացնում:

Չորրորդ գործողությունը դատի տեսարանն է: Դատավոր-Գայլը և քարտուղար-Աղվեսը ուրախ են, որ վերջապես կարող են իրենց վաղեմի թշնամի Շան հախից գալ: Նրանց խոսակցությունը լսում է Աքաղաղը, որը Քեռի Քուչիի նկատմամբ արձակված անարդար դատավճռից հետո բոլորին հայտնում է գաղտնիքը: Կենդանիներն ու թոշունները Գայլի

և Աղվեսի հագից հանում են դատական զգեստները: Ամեն ինչ ավարտվում է բարեհաջող՝ ճշմարիտը հաղթանակում է:

Այս զվարճալի բովանդակությունն ունի մի շարք կենդանի, անբռնազբոս տեսարաններ, երեխաններին գրավել կարողացող ծիծաղելի և ուրախ իրավիճակներ:

Բարիսուդարյանը թափով սկսեց գործը, և երեք ամսից էլ կարճ ժամկետում օպերան արդեն պատրաստ էր (կոմպոզիտորն աշխատանքն սկսել է 1945 թ. հունիսի 31-ին, ավարտել հոկտեմբերի 25-ին): Նա ստեղծեց կենդանի, գրավիչ երաժշտություն, լի կերպարային վառ բնութագրումներով, երաժշտական դիպուկ և արտահայտիչ նկարագրություններով:

Աշխատելով ստեղծել մանուկների համար ուրախ ու կենսախինդ օպերա, կոմպոզիտորը դարձյալ դիմեց Հայկական երաժշտական ֆոլկլորին: Հայկական երաժշտության լադերի միջից նա փնտրում ու օգտագործում էր մաժորային պայծառ երանգներով լադեր: «Քեռի Քուշին» մաժորային շատ տոննայնություններ ունի, որոնց հաճախակի փոփոխությունը և համագրումները կենդանի են դարձնում երաժշտության ընդհանուր «գունային» ֆոնը:

Մանկական օպերայի երաժշտությունը գրված է պարզ, մանկական ընկալմանը մատչելի լեզվով: Մամուլը դրական գնահատեց Բարիսուդարյանի օպերան, զետեղելով գրվատական գրախոսականներ:

«... Ս. Բարիսուդարյանը առաջինն է (Հեղինակը նկատի ունի հայ կոմպոզիտորներին — Մ. Տ.-Մ.), որը հատուկ խնամքով, փորձված մանկավարժին վայել հոգատարու-

թյամբ, երեխաների համար մատչելի երաժշտական-գեղարվեստական միջոցներով ստեղծել է մեր երաժշտական գոականության մեջ մի նոր ժանր՝ «մանկական երաժշտական կոմեդիա»,— գրի է երաժշտագետ Ս. Գասպարյանը «Սովետական Հայաստան» թերթում¹:

Երաժշտական կոմեդիայի թատրոնի ղիրեկցիան և գեղարվեստական ղեկավարները հավանություն տվեցին օպերայի երաժշտությանը, որից հետո Բարիսուղարյանը գործիքավորեց այն (1946 թ. փետրվար):

Օպերան բեմադրվեց երաժշտական կոմեդիայի թատրոնում, բայց անհաջող (ռեժ.՝ Ա. Դանզաս): Հակառակ կոմպոզիտորի համառ ցանկությանը՝ բեմադրությունն իրականացնել փափուկ, նրբագեղ տոններով, ինչպես և պահանջում է երաժշտության բնույթը, թատրոնում բեմադրությունը ստացվեց դժգույն, հնարամտությունից, երևակայությունից և իսկական գեղարվեստականությունից զուրկ: Մի քանի ներկայացումներից հետո օպերան հանվեց բեմից:

Պարտիալուրում որոշ փոփոխություններ ու լրացումներ կատարելուց հետո Բարիսուղարյանն առաջարկեց բեմադրությունն իրականացնել օպերային թատրոնում: Բայց մինչև այժմ այդ մանկական հետաքրքիր օպերան իր իսկական բեմական մարմնավորումը չի ստացել: Իսկ մեր թատրոնը այնքան շատ է զգում մանկական գործերի կարիքը:

Բեմական երկու ստեղծագործությունների անհաջող ձա-

¹ «Քեռի Քուշին» նոր երաժշտական կոմեդիան («Ս. 2.», 1946 թ., ապր. 9):

կատագիրը, բնականաբար, բացասարար անդրադարձավ կոմպոզիտորի ստեղծագործական լարվածության վրա:

Քառասնական թվականներին Բարխուդարյանը սիմֆոնիկ գործ գրելու ևս մի փորձ է անում՝ «1942 թվական» սիմֆոնիկ պուեմը, բայց այդ ստեղծագործությունը կյանք չունեցավ: Թիշ դեր շխաղաց և այն հանգամանքը, որ մտածողությամբ Բարխուդարյանը ոչ թե սիմֆոնիստ է, այլ կամերային մանրանվագի վարպետ: 1943 թ. նա մասնակցեց ՍՍՀՄ հիմնի համամիութենական մրցանակաբաշխությանը: Բարխուդարյանի հիմնը անցավ երկու փուլ, որից հետո կատարվեց Մոսկվայում, որտես մեկը հաջող փորձերից:

1944 թ. Բարխուդարյանը մասնակցեց Հայկական ՍՍՀ հիմնի ստեղծման մրցանակաբաշխությանը: Այս անգամ ևս նրա հիմնն անցավ երկրորդ փուլը և շնորհակալությամբ նշվեց Հայկ. ՍՍՀ ժողկոմիորհի կողմից:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում կոմպոզիտորի ստեղծագործական արդյունավետությունը նշանակալիորեն պակասեց: Խսահակյանի խոսքերով գրված վոկալ շարքից բացի, այդ շրջանում նա կազմեց «Թերեւ և միշին գժվարության 26 պիես-մանրանվագ» ժողովածուն, իսկ հիմնականում նա վերանայեց իր շատ ստեղծագործությունները, կատարեց դրանց փոխադրություններն այլ գործիքների համար, նախապատրաստեց մանկական նոր ժողովածուներ:

Կարևոր ու նշանակալից է Բարխուդարյանի մանկավարժական գործունեությունը, որի սկիզբը կարելի է համարել 1923 թ. Թբիլիսիի կոնսերվատորիայում: Այստեղ նա սկզբանը վարում էր համարյա բոլոր տեսական առարկաները,

իսկ 1934 թվականից՝ միայն կոմպոզիցիայի դասարանը։ Միայն 1954 թ. նա թողեց կոնսերվատորիան, անցնելով թագիքի։

Երեք տարի (1934—37 թթ.) նա համատեղում էր աշխատանքը երկու կոնսերվատորիաներում՝ Երևանում և Թբիլիսիում։ Ամիսը մեկ անգամ նա գալիս էր Երևան, ուսանողների հետ պարապելու, մնացած ժամանակ նրան փոխարինում էր ասիստենտը՝ Վ. Տալյանը։ 1937 թ. Տալյանն սկսեց ինքնուրույն վարել կոմպոզիցիայի պարապմունքները։ Որոշ ժամանակ Բարխուդարյանի մոտ են պարապել սովետահայ կոմպոզիտորներ Ա. Սաթյանը, Ա. Շիշյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Հարությունյանը, Դ. Սարյանը, Է. Միրզոյանը։ Բարխուդարյանի մոտ են սովորել նաև Ս. Քյոսայանը, Լ. Սաֆարյանը, Ռ. Աթայանը, Արտ. Խաչատրյանը և ուրիշներ։ Բայց իր աշխատանքը վերը թվարկված կոմպոզիտորների հետ նա մինչև վերջ շտարավ։ Բարխուդարյանի մանկավարժական գործունեության հիմնական մասը կապված է Թբիլիսիի կոնսերվատորիայի հետ, այստեղ նա տարիներ շարունակ ղեկավարել է տեսական ստեղծագործական ամբիոնը։ Այստեղ նա կրթել է կոմպոզիտորների մի ամբողջ սերունդ, որոնցից շատերը հետագայում դարձել են վրացական և հայկական երաժշտության անվանի գործիչներ։

Այսպես, Բարխուդարյանի աշակերտներն են եղել Ա. Բալանչիվածեն, Ի. Տուսկիան, Շ. Թաքթաքիշվիլին, Ա. Զիգուգիձեն, Գ. Զիփկաձեն, Ա. Անդրիաշվիլին, Դ. Թորաձեն, Ա. Մաճավարիանին, Օ. Թաքթաքիշվիլին, Շ. Զոջուան, Օ. Խուցիշվիլին և ուրիշներ։ Հայերից Թբիլիսիի կոնսերվատորիա-

յում նրա մոտ են ավարտել՝ է. Գրիկուրովը, Ա. Դոլուխան-
յանը, Վ. Տալյանը, է. Աբրահամյանը, Մ. Մազմանյանը և
ուրիշներ:

Նրա բազմաթիվ սաներից շատերն այսօր արվեստի վաս-
տակավոր գործիչներ են, պետական մրցանակների դափնե-
կիրներ, պրոֆեսորներ ու դոցենտներ: Դատելով այն բանից,
թե վերոհիշյալ բոլոր կոմպոզիտորներն ինչ տեղ են գրավել
իրենց ազգային երաժշտության զարգացման գործում, դըժ-
վար չի լինի հասկանալ, թե որքան խելամիտ ու նրբազգաց
դեկավար է եղել Բարխուդարյանը, որչափ ստույգ է նա
հասկացել կոմպոզիտորական դասարանի ղեկավարի իր
խնդիրները: Իր ուսանողներին նա դաստիարակում էր դա-
սական և, գլխավորը, ազգային երաժշտական ավանդույթ-
ների խոր յուրացման ոգով, համառորեն ու հաստատապես
ուղղելով նրանց ստեղծագործությունը սեփական ժողովրդի
երաժշտական հարուստ բառապաշարի օրգանական օգտա-
գործման ճանապարհով: Զպարտադրելով որևից կանոն ու
չկիրառելով մանկավարժական սահմանափակումներ, յուրա-
րանշյուրի ստեղծագործական անհատականության բացա-
հայտումը նա խրախուսում էր ըստ ամենայնի: Դրա համար
էլ նրա սաներից յուրաքանչյուրը վառ, ինքնատիպ ոճի, ան-
հատական ձեռագրի տեր կոմպոզիտոր է:

- 1946 թ. Թբիլիսիի կոնսերվատորիայի դիրեկցիայի բնու-
թագրում գրված է. «... Կոնսերվատորիայում աշխատելու
տարիներին Ս. Վ. Բարխուդարյանը պատրաստել է կադրեր,
որոնք ներկայումս վրացական ՍՍՀ կոմպոզիտորների առա-
ջավոր խումբն են կազմում...

Ս. Վ. Բարխուդարյանը իսկական մանկավարժի, հասարակական ակտիվ գործի, իր աշխատանքը սիրող մարդու, կոնսերվատորիայի շատ պատասխանատու բաժինը՝ կոմպոզիցիայի դասարանի հմուտ ղեկավարի օրինակ է հանդիսանում...»:



Ստեղծագործական ու մանկավարժական գործունեությանը զուգընթաց, Բարխուդարյանը հափշտակությամբ ըզբաղվում էր նաև գիտա-հետազոտական աշխատանքով: Նա բազմաթիվ զեկուցումներ է կարդացել կոնսերվատորիայի տեսական ամբիոնում զանազան խնդիրների շուրջը, վերլուծել է Բեթհովենի երկերը, Հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, զրել է մի շարք հոդվածներ և այլն: Հետաքրքիր են նրա զեկուցումների թեմաները՝ «Բեթհովենի դաշնամուրային սոնատներում մշակման մասի հարմոնիկ պլանի և հիմնակետի նշանակության մասին», «Մոդուլյացիա» տերմինի մասին», «Դիսոնանսող ինտերվալների լուծումը՝ ֆունկցիաներում ձգտող տոների հիման վրա», «Դիալեկտիկան սոնատային ձևում», «Ժողովրդական երգերի լադային հիմքը», «Հայ երաժշտության մեջ խոշոր ձևի խնդիրը», «Կարա-Մուրզայի երգերի վերլուծությունը», «Ժողովրդական երգերի Կոմիտասի մշակումների վերլուծությունը» և այլն: Սուկ թվարկումը բացահայտում է կոմպոզիտորի հետաքրքրությունների լայն շրջանակը, նրա ձգտումը՝ խորությամբ թափանցել կոմպոզիցիայի գաղտնիքների մեջ, ընդհանրացնել իր գիտարկումներն ու փորձը:

Հետաքրքիր շատ դիտողություններ է արել Բարխուդարյանը, վերլուծելով Բեթհովենի դաշնամուրային սոնատները, որոնք շարադրել է «Բեթհովենի դաշնամուրային սոնատներում մշակման մասերի հարմոնիկ պլանի մասին» հոդվածում, տպագրված «Երաժշտության հարցեր» ժողովածուում (3-րդ հատոր, Մոսկվա, 1960): Նրա դիտողությունների էռւիթյունը կայանում է տոնայնական զարգացման օրինաչափությունների; սոնատի հիմնական կառուցվածքի գլխավոր ֆունկցիաների առավել լրիվ բացահայտման սկզբունքների, ընդհանուր շղթայում օղակներ հանդիսացող տոնայնությունների միջև ֆունկցիոնալ փոխադարձ կապի բացահայտման մեջ: Ուսումնասիրելով Բեթհովենի սոնատներում տոնայնական զարգացման տրամաբանությունը, Բարխուդարյանը դրանք դիտում է որպես տրամաբանական կոմպոզիցիայի առավել կատարյալ նմուշներ, որոնք կարող են խիստ ուսանելի ուղենիշ հանդիսանալ կոմպոզիտորների համար:

Որոշ շափով անսովոր, բայց յուրօրինակ համոզիլ են նրա մտքերը «մողովացիա» տերմինի հասկացման շուրջը: Սովորաբար, մողովացիա ասելով միշտ հասկացել են անցումը մի տոնայնությունից մյուսին: Տերմինի նման հասկացությունը ձևակերպված է նաև ուսումնական ձեռնարկներում, մասնավորապես Յու. Տյուլինի և Ն. Պրիվանովի Հարմոնիայի դասագրքում¹, որը նշում է Բարխուդարյանը: «Մողովացիա ասելով հասկանում ենք անցումը մի տոնայնությունից մյուսին՝ տոնայնական մողովացիա: Սա մողովացիայի հիմ-

¹ 1956 թ. հրատարակություն:

նական տեսակն է: Մյուսը լադային մողուցյացիան է, որն իրենից ներկայացնում է նույնանուն տոնայնությունների փոփոխությունը (օրինակ, անցումը դռ-մինորից դռ-մաժոր և հակառակը)»¹:

Բարխուդարյանը վիճարկում է տերմինի այդ համընդհանուր հասկացությունը և առաջարկում իրենը, որը թեև վիճելի է, բայց ուցինալ հատիկ է պարունակում: Համենայն դեպս, անհրաժեշտարար ստիպում է մտածել հաստատված որոշ հասկացությունների շուրջ:

Ինչպես ու է հասկանում մողուցյացիան Բարխուդարյանը: Նա գտնում է, որ մի տոնայնությունից մյուսին անցումը դեռ մողուցյացիա չէ, հաճախ դա տոնայնական զարգացում է, հիմնական տոնայնության հաստատումը հարակից, կենտրոնի հետ ֆունկցինալ կապերով կապված տոնայնություններով, որոնք ինքնուրուցնաբար չեն հաստատվում այնքան, որ գիտակցությունից դուրս վանեն տոնիկայի զգացողությունը: Շրջապատող տոնայնությունները ընդհանուրի լոկ մասնիկներն են և արտացոլում են տոնայնական տվյալ սիստեմի հարմոնիկ հնարավորությունները: «Ներգրավված հարակից տոնայնությունները,— գրում է Բարխուդարյանը²,— երաժշտության հետագա շարադրման ընթացքում, պատկերավոր ասած, հալշում են, այսինքն՝ վերանում են, տեղը զիջելով տոնայնական սիստեմի կենտրոնին: Վերանում են, քանի որ նրանց նշանակությունն է նպասել հարմոնիկ զար-

1 «Մողուցյացիա տերմինի մասին» Հոդվածից (Ճեռագիր):

2 նույն տեղը:

դացմանը և, ֆունկցիոնալ տեսակետից լինելով կապված կենտրոնի հետ, ունենում են օժանդակ նշանակություն»:

Ի՞նչ է առաջարկում նա ընդունված հասկացության փոխարեն: Ահա թե ինչ է գրում. «Մոդուլյացիան ամենից առաջ ստեղծագործության մեջ տոնայնական սիստեմի փոփոխում է նոր սիստեմով, ապա թեմատիկ նյութի փոփոխումը, և վերջապես հենքի փոփոխումը: Ահա թե որն է մոդուլյացիայի էությունը: Այստեղ հարկ է նշել, որ մոդուլյացիան բնորոշող երաժշտական ձևի բոլոր բաղադրիչների փոփոխումը նպաստում է նոր որակի ստեղծմանը»: Հետևաբար, մոդուլյացիա ասելով Բարխուդարյանը հասկանում է երաժշտական նյութի նոր որակի դրսևորում: Տերմինի նման հասկացությունը որոշակիորեն տրամաբանված է: Երաժշտական նյութի զարգացման մեջ «տվյալ սիստեմի շրջապատող տոնայնությունների ներգրավումը» Բարխուդարյանը վերագրում է նարմնիկ զարգացմանը, որը «պետք չէ շփոթել մոդուլյացիայի հետ», քանի որ «հարմոնիկ զարգացման դեպքում կատարվում է կենտրոնի հետ ֆունկցիոնալ կապի մեջ գտնվող շրջապատող տոնայնությունների ներգրավում, իսկ մոդուլյացիայի դեպքում կատարվում է տոնայնական նոր սիստեմի ներգրավում»:

Այսպիսով, հարմոնիկ զարգացումը նա մասնատում է երկու տեսակի՝ սովորական ձևի հարմոնիկ զարգացում, եթե ներգրավվում են կենտրոնի հետ ֆունկցիոնալ կապի մեջ գտնվող շրջապատող տոնայնություններ և բարձրագույն ձևի հարմոնիկ զարգացում, այսինքն տոնայնական սիստեմի փոփոխություն: Դա էլ հենց նա համարում է մոդուլյացիայի


Հիմք: Եթե Բարխուղարյանի դատողությունների այս մասը
ընդունելի կարելի է համարել տրամաբանական հիմնավոր-
վածությունից, վերլուծման գործնական փորձից ելնելով,
ապա նրա դատողությունների մյուս մասը՝ մոդուլյացիա
հասկացության ձևակերպումն անկասկած խոցելի է: Նկատի
ունեմ, քստ ձևակերպման, թեմատիկ նյութի և հենքի ան-
պայման փոփոխումը: Այստեղ դժվար է համաձայնել Բար-
խուղարյանի հետ, քանի որ մուգուլյացիայի նման ըմբռո-
նումը հակասում է կոմպոզիտորական կենդանի պրակտիկա-
յին, որտեղ տոնայնությունների փոփոխման, մի տոնայնու-
թյունից ֆունկցիոնալ տեսակետից կապ չունեցող մյուս
տոնայնությանը (միննույն թեմատիկ նյութի և հենքի դեպ-
քում) անցնելու անթիվ-անհամար օրինակներ կան: Օրինակ,
վերցնենք թեկուզ Ռավելի «Բոլերոն», որտեղ ամրող ստեղ-
ծագործության ընթացքում համառորեն պահպանվող թեման
C-ծայր հիմքով (բազմատոնային բոլոր շեշտավորումներով
հանդերձ) վերջում հանկարծ տեղափոխվում է տերցիայով
վեր: Արդյո՞ք տոնայնությունների այդ փոփոխությունը հար-
մոնիկ զարգացում է: Իհարկե ոչ, այստեղ կատարվում է
ամենաիսկական մոդուլյացիա, քստ որի թեման տեղափոխ-
վում է տոնայնական նոր ոլորտ: Իսկ ընդհանրապես «մո-
դուլյացիա» հասկացության շուրջը Բարխուղարյանի դատո-
ղություններում արժեքավոր շատ մտքեր կան, որոնք մտա-
ծելու և քննելու տեղիք են տալիս: Անառարկելիորեն մի բան
պիտի ընդունել՝ հաճախ հարմոնիկ զարգացումը դիտվում է
որպես մոդուլյացիաների շղթա, այն դեպքում, երբ շոշափ-
ված տոնայնություններից և ոչ մեկը չի ամրապնդվում

(վերցնենք, թեկուզ, սոնատային ալեգրոների, մշակումները), այլ հաճախակի օգտագործվում է որպես երանգ կամ տոնայնական մյուս ոլորտին անցնելու նախնական աստիճան:


Գիտա-հետազոտական աշխատանքի բնագավառում, ուր երկար տարիներ հափշտակությամբ աշխատում է Բարխուդարյանը, նա ցուցաբերել է խորամտություն և վերլուծական-դիտողական ունակություն, քննադատական և վիճաբանական լիցք: Հարմոնիայի, լազի ասպարեզում արժեքավոր իր շատ գիտողությունները նա լայն քննարկման է դրել, հաճախակի հանդես գալով կոնսերվատորիայի կոմպոզիտորական ամբիոնում:

Ներկայումս, չնայած պատկառելի տարիքին, Բարխուդարյանը պահպանել է իր զարմանալի եռանդն ու սթափ միտքը: Նրան միշտ կարելի է տեսնել դաշնամուրի մոտ, իր ստեղծագործությունները խմբագրելիս, նոր հրատարակություններ պատրաստելիս, նա հետաքրքրությամբ է հետևում ժամանակակից, հատկապես հայկական երաժշտության նոր երեվությներին:

Ս. Բարխուդարյանի վաստակը բարձր է գնահատված հասարակության ու կառավարության կողմից: 1930 թ. հաստատվեց նրա պրոֆեսորական կոչումը, 1935 թ. նրան շնորհվեց Հայկական ՍՍՀ արքեստի վաստակավոր գործչի, իսկ 1936 թ. Վրացական ՍՍՀ արքեստի վաստակավոր գործչի կոչումներ: Մանկավարժության 25-ամյա աշխատանքի կապակցությամբ նա պարգևատրվել է Լենինի շքանշանով: 1960 թ. Հայաստանի կառավարությունը նրան շնորհեց Հպակամիան ՍՍՀ ժողովրդական արտիստի կոչում:



Զարիսից աջ՝ Կ. Ս. Սարգսյան և Ս. Վ. Բարխուդարյան





Սարդիս Բարիսուղությանը Լենինգրադի պրոֆեսորադասա-
խոսական կազմի հետ:

Բարխուղարյանի նուրբ ու գեղեցիկ արվեստը սիրով ու
հաճույքով է ընդունվել երաժշտասերների կողմից, իր լավա-
գույն ստեղծագործություններով նա իսկական ժողովրդա-
կանություն է վայելում: Ստեղծագործական ու մանկավար-
ժական անդուլ գործունեությամբ նա բավականաշափ նը-
պաստել է հայ և վրաց ժողովուրդների ստեղծագործական ու
բարեկամական կապերի ամրապնդմանը: Զնայած իր կյանքի
զգալի մասը անց է կացրել Թիֆլիսիում, նա միշտ սերտո-
րեն կապված է եղել Հայաստանի երաժշտական կյանքի հետ,
գործուն մասնակցություն ունեցել նրա ամին: Դրա համար էլ
հայ ժողովուրդը, ի թիվս ստեղծագործական մտավորակա-
նության իր լավագույն ներկայացուցիչների, տալիս է նաև
Սարգիս Բարխուղարյանի անունը:

Ա. ԲԱՐԵՈՒԻԴԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ

Դաշնամուրային ստեղծագործություններ

Արևելյան պարեր (4)	1910—1913	1910, 1913, 1932
Դաշնամուրային պիեսների	1910—1918	1924—25
Առաջին սերիա.		
Էսքիզ h-moll		
Ակվարել		
Հերիաթ		
Էսքիզ d-moll		
Օբորոցային		
Աշնանային		
Սոնատ, 4 մասից	1915	
Դաշնամուրային պիեսների	1915—1923	1928
Երկրորդ սերիա.		
Շուրջպար		
Մենապար		
Էսքիզ A-dur		
Պրելյուդ № 2 ¹ «Աշուե»		
Նազ-պար	1921	1923
Պոեմ «Ճնապիրի խցիկում»	1921	1923

Ժողովրդական պար «Հայստան»	1926	
Սլուհա դաշնամուրի «Համար, 4 մասից 1932	1934	
Անդանտե	1932	1935
Մանկական պիեսների ժողովածու (12 պիես)	1939	1942, 1948, 1962
Պիեսների ժողովածու պատանեկության Համար (12 պիես)	1942—43	1948
25 պիես-մանրանվագներ	—	1953
Մանկական ալբոմ	—	1959
Ընտիր մանրանվագներ (20 պիես)		1967

Վոկալ ստեղծագործություններ

Սալաթ-Նովայի 8 երգ (մշակումներ)	1932—33	1935
Ժողովրդական երգերի մշակումներ	1927—36	1932—38, 1957
«Սարի աղջիկ»		
«Մամով աղջիկ»		
«Դլե յաման»		
«Միրուհիս»		
«Մանկալ ես»		
«Քոռո-օղլի»		
Վոկալ շարք Ալի. Խաչակրյանի տեքստերով	1959	1961

Բալետ

«Նարինե», 4. դորժողովություն	1938	—
------------------------------	------	---

Օպերա

«Քեռի քուշի», մանկական, 4 դորժո- ղովություն	1946	—
--	------	---

Սիմֆոնիկ նվագախմբի համար

Սիմֆոնիկ պոեմ «Անուշ», 4 մասից	1916—1917	—
Սյուիտ «Զակֆեղերացիա»	1932	—
Սյուիտ լարային նվագախմբի համար	1939	—
Երկու սյուիտ «Նարինե» բալետից	1942	—
Նախերդանք	1943	—

Փողային նվագախմբի համար

Սգո քայլերգ թումանյանի հիշատակին	1923	—
Շտուրմ-քայլերգ	1933	1933

Կինոերաժշտուրյուն

«Կարո» (գեղ. Ֆիլմ.)	1936
«Քաջ Նազար» —»—	1940
«Շունն ու կատուն» (մուլտ. Ֆիլմ)	1936
«Տերտերն ու ալծը» (մուլտ. Ֆիլմ)	1939

Երաժշտա-քատերական ձևավորումներ

Մեծապատիկ մուրացկաններ	1933
Շահնամե	1935
Սկառուտ	1935
Երկիր հայրենի	1936
Նամուս	1936
Քաջ Նազար	1941
Արևելյան Ատամնարուլժ	1942
Խաթաբալա	1944
Մեծ հարսանիք	1946
Հարազատ մարդիկ	1947

Խմբերգային ստեղծագործուրյուններ

Սովետական Միության հիմնը	1943
Հայկական ՍՍՀ հիմնը	1944

Մարգարիտ Պողոսի Տեր-Սիմոնյան
ՍԱՐԳԻՍ ԲԱՐԵՈՒԻԴԱՐՅԱՆ

Խմբագիր՝ Մ. Հ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Զգ. Ա. Ասատրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ. Եղանյան
Վերատուգոլ սրբագրիչ՝ Վ. Ա. Վարոսյան



Հանձնված է արտադրության 14/VIII 1967 թ.: Ստորագրված է տպագրության 20/II 1968 թ.: Պատվեր 1659: Տիրած 1000: ՎՃ 08410:
Թուղթ՝ տպագրական № 1, $70 \times 108^1/_{32}$, հրատ. 2,5 մամ.+3 ներդիր,
տպագր. 2,5 մամ.=3,5 պայմ. մամ.: Գինը՝ 17 կուգ.:

*

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:


*

ՀԱՅՀ Մինիստրների սովետին առջևներ մամուլի կոմիտեի
պոլիգրաֆարոյունաբերության գլխավոր վարչության Հակոբ
Մեղապարտի անվան այդիգրաֆկոմինատ, Երևան, Տերյան 91:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0047496



ԳԻՐԱԿ 17-ն.

“ՀԱՅԱՍՏԱՆ”